№ 215 ՇԱԲԱԹ, 29 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 29 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 215

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

# ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaktion du journal „MSHAK“.

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 3 ՌՈՒԲԼԻ։

Հոկտեմբ. 1-ից մինչև նոյեմբ. 1-ը 85 կ.։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

1500-ԱՄԵԱԿ ՀԱՅ ՏԱՌԻ ԵՒ 400-ԱՄԵԱԿ ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Այսօրվանից վաճառվում են արտասահմանում պատրաստված Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, Ս. ՍԱՀԱԿ, Ս. ՄԵՍՐՈՊ, ՀԱՅՈՑ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԸ ՕՇԱԿԱՆՈՒՄ ընտիր պատկերները 1000 հատը (իւրաքանչիւր արկղում ամէն մի պատկերից 250-ական տեսակ) 1000 ռուբլի, փոխանակ 1500 ր.: Հրաւիրվում են ձեռնհաս հաստատութիւններ ձեռք բերել այդ պատկերները և տարածել հայ ընտանիքներում:

Առանձին-առանձին իւրաքանչիւրը 1 ռուբլի 50 կոպ.:

Ամենապատիւ նուէր, որ հայութիւնը կարող է ինքն իրան անել՝ այդ նուիրական ՅՈԲԵԼԵԱՆԱԿԱՆ չորս պատկերները և պճնազարդել դահլիճը:

Դիմել՝ БЮРО ПЕЧАТИ. ТИФЛИСЪ, Голов. пр. 41.

(կ.ե.ռ.) տռ. 26. 5—1

ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹ. 400-ԱՄԵԱԿԻ ԹԻՖԼԻՍԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

խնդրում է բոլոր հայ հաստատութիւններին ուղարկել իրանց ներկայացուցիչներին

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ,

որ նշանակված է ամսիս 29-ին, երեկ. ժամը 7½-ին, Քաղաքային Դումայի դահլիճում։ Ժողովի օրակարգն է՝ 1) Զեկուցում Թիֆլիսի յանձնաժողովի գործունէութեան, 2) Առաջարկ յօբելեանը յետաձգելու մասին։

ԾԱՆՕԹ.—Այն հաստատութիւնները, որոնք գուցէ թիւրիմացութեամբ հրաւէր չեն ստացել, նոյնպէս հրաւիրվում են մասնակցել ժողովին։

տռ. 732. 1—1

## ՊԱՏԵՐԱԶՄԸ ԲԱԼԿԱՆՆԵՐՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

27 սեպտեմբերի

Կ. Պոլիս.—Թիւրքաց աղբիւրներից տեղեկացնում են, որ օսմանեան զօրքերը ալբան կամաւորների հետ միասին մտել են Բէրան։ Կատաղի կռիւը քաղաքի շուրջը շարունակվում է։

150 բօլգար յարձակվեցին Կարալօվօ բլօկհաուզի վրա։ Յուսահատ պաշտպանվելուց յետոյ թիւրքերը յետ նահանջեցին, յետոյ օժանդակութիւն ստանալով վերադարձան և նորից գրավեցին բլօկհաուզը։ Տեղի են ունենում բազմաթիւ ընդհարումներ զօրքերի և հրոսակախմբերի միջև։

Աւստրիայի ճնշման տակ Բ. Դուռը մալիսօրներին զիջեց հարկերի և զինուորական ծառայութեան հարցում։ Զօրքերին հրամայված է չը կռուել մալիսօրների հետ, որոնք համաձայն լուրերի պէտք է երդվեն օգնելու Թիւրքիային։ Յունական գրաւված շոգենաւերի մէջ նշանակվեցին թիւրք նաւաստիներ. յոյն նաւաստիներին ուղարկեցին իրանց հայրենիքը։

Գերմանիայի և Աւստրիայի դեսպաններն առանձին-առանձին այցելեցին Նորատունկեանին։

Կառավարական շրջաններում հաւատացնում են, թէ Թիւրքիան թոյլ չի տայ եւրոպական մեծ պետութիւններին միջամտել։

Աւստրօ-ունգարական աւագ թարգմանը սեպտ. 27-ի երեկ. ժամը 6 ու 30 րօպէին արտաքին գործերի մինիստր Նորատունկեանին յանձնեց այն հաւաքական նոտան, որ ստորագրել են հինգ մեծ պետութիւնների դեսպանները։

—

Պօդգօրիցա.—Պատերազմը յայտարարվելուց յետոյ Նիկօլայ թագաւորը կոչով դիմեց ժողովրդին։ Ճիշդ առ. ժամը 8-ին լսվեց առաջին թնդանօթը, որ արքայազն Պետրը ուղղեց ու պարպեց Գրադինում թիւրքաց Պլանինիցա կենտրոնական դիրքի դէմ։ Միաժամանակ չեռնօգորական մարտկոցները կրակ բացին Վրանիէ և Բօգան բերդերի ուղղութեամբ։ Քսան րօպէից յետոյ թիւրքերը հեռացան Պլանինիցայից։ Ընդհանուր հրամանատար արքայազն Դանիլօն գտնվում էր կռւի մէջ։ Թագաւորը դիտում էր կռիւը Գօրիցի բարձունքներից արքայազն Միրկօյի հետ։ Թնդանօթաձգութիւնը աջողութեամբ շարունակվում է։

Ցերեկով չեռնօգորցիները ստիպեցին լռել Բօգանի մարտկոցներին։ Առաւօտը և կէսօրին որոշ ժամանակից յետոյ լսելի էր հրացանաձգութիւն։ Չեռնօգորական հետևակ գունդը արտիլերիայի պաշտպանութեան տակ դանդաղ մօտենում է Դէչիչին։

—

Լօնդօն.—Ռէյտէրի պաշտօնական թղթակիցը հեռագրում է. «Չեռնօգորական զօրքը սկսեց պատերազմական գործողութիւններ ընդդէմ Թիւրքիայի, յարձակվելով այսօր առաւօտեան թիւրքական ուժեղ դիրքերից մինի վրա, որ գտնվում է Պօդգօրիցայի դիմաց։ Չորս ժամ տևող թնդանօթաձգութիւնից յետոյ թիւրքերը հեռացան Պլանինիցա բարձունքից։ Չեռնօգորցիք ռմբակոծեցին հետևեալ թիւրքական դիրքը։ Թիւրքաց օգնական գնդերը հասան երեկոյեան դէմ։ Սկսվեց ընդհանուր ճակատամարտ, որ դեռ շարունակվում է»։

Համայնքների պալատում Գրէյը ասաց. «Կ. Պոլսի բրիտանական դեսպանին հրահանգներ են տրված դարձնել Թիւրքիայի ուշադրութիւնը այն հանգամանքի վրա, որ յունաց շոգենաւերի գրաւումը չէ կարող արդարացումն գտնել միջազգային իրաւունքի տեսակէտից, և ինչքան որ շօշափվում են բրիտանահպատակների շահերը, մենք պէտք է պահենք մեր բոլոր իրաւունքները։

—

Ցէտինիէ.—Բացի ռուսական Կարմիր Խաչի ընկերութիւնից, չեռնօգորական կառավարութեանը իմաց տուին, որ խմբեր են գալիս պատերազմի դաշտը նաև ֆրանսիական, անգլիական և աւստրիական ընկերութիւնների կողմից։

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

26 սեպտեմբերի

Մօսկվա.—Վաղը հաստատվում է հանգանակիչ յանձնաժողով թիւրքական նահանգների կարիքաւոր սլաւօնների օգտին։

Սերբիական գաղութի վանահայր Միխայիլ վարդապետը սերբիական կառավարութիւնից հեռագիր ստացաւ դադարեցնելու կամաւորների ցուցակագրութիւնը, որովհետև առ այժմ նրանք աւելորդ են։

—

Օդեսսա.—Տեղիս հացի շուկայի դրութիւնը ճնշված է։

—

Խարկօվ.—Մերձաւոր Արևելքի բարդութիւնների պատճառով այլ ևս հացահատիկ չէ արտահանվում։

—

Հռոմ.—Ուշիի գիշերային նիստի արձանագրութիւնը հեռագրվեց Հռոմ և Կ. Պոլիս։ Կառավարութիւնները կայացրին իրանց վճիռները։

—

Տրիպօլիս.—Բօմբում իտալացիների ափ իջնելուց յետոյ երէկ երեկոյեան թիւրքաց արտիլերիան կրակ բացեց չորս թնդանօթից։ Իտալացիք պաշտպանեցին և ձեռք ձգեցին կարևոր Սիդի-Աբդուլա դիրքը։ Թիւրքերի կորուստները խոշոր են. իտալացիք կորցրին 4 սպանված և 59 վիրաւոր։

—

Բեռլին.—Գերմանական կառավարութիւնը կտրականապէս Բ. Դռնից պահանջեց ազատ արձակել յունաց շոգենաւերը, քանի որ Յունաստանը և Թիւրքիան դեռ կռւող կողմեր չեն։

—

Վիեննա.—Լուր տարածվեց, թէ իբր Վիեննա է եկել յատուկ բօլգարական մասնաժողով զէնք գնելու բօլգարական զօրքի համար։ Յիշեալ լուրը հերքվում է։

—

Աթէնք.—Սեպտ. 27-ի երեկոյեան ժամանեց թագաւորը։ Ոգևորված ամբոխը ուղեկցեց նրան մինչև պալատ։ Իր ճառի մէջ թագաւորը լիակատար վստահութիւն յայտնեց ժողովրդին և կառավարութեանը։ Ապա խօսեց Վէնիզէլօսը և յայտնեց, թէ նա շարունակում է յուսալ, որ դժուարութիւնները խաղաղ լուծում կը ստանան։ Ամբոխը ընդհատեց նրան՝ բացագանչելով «կեցցէ պատերազմը»։ Վէնիզէլօսը կրկնեց իր խօսքերը, աւելացնելով որ եթէ Յունաստանը յուսախաբ լինի, այն ժամանակ ժողովուրդը կարող է հաստատ յոյս դնել զօրքի և նաւատորմի վրա։

—

Սօֆիա.—Ռուսաց և աւստրիական դեսպաններն այցելեցին Գէշօվին։

Մինիստրների խորհուրդը քննում է արված առաջարկութիւնները։ Քաղաքական շրջանները լաւատես են խաղաղութիւնը պահպանելու նկատմամբ։

—

Բէլգրադ.—Ֆրանսիական դեսպանը պաշտպանեց ռուսաց և աւստրիական կուսակցութիւնների ներկայացրած առաջադրութիւնը։

—

Բուխարէստ.—Զօրախաղերը վերջացան։ Զօրքերը ցրվում են։

—

Վիեննա.—Ունգարական պատգամաւորութիւն։ Արտաքին գործերի մինիստրութեան նախահաշւի քննութեան ժամանակ զեկուցանող Նագին, ողջունելով որ Աւստրիան գործում է Ռուսաստանի հետ միասին, յայտնեց, թէ պէտք է ամեն միջոց ձեռք առնել պատերազմին վերջ դնելու ու արիւնահեղութիւնը դադարեցնելու համար, յուսաց, որ եւրոպեան դաշնակցութեան քաղաքականութիւնը կարող կը լինի տանել ներկայ ծանր փորձութիւնը։ Յետոյ նա շարունակեց. «Ամենից շատ մենք վստահ ենք մեր սեփական ույժերի վրա։ Մենք պէտք է ուժեղ լինենք, որպէսզի ոչ ոք միջադէպ չառաջացնէ միապետութեան հետ. պէտք է նորանոր զոհաբերութիւններ անել զօրքի և նաւատորմի համար»։ Պատգամաւորութիւնը վստահութիւն յայտնելով արտաքին գործերի մինիստրին՝ ընդունեց բիւջէն։ Բոլոր հռետորները խօսեցին Ռուսաստանի վերաբերութեամբ լիակատար վստահութիւն սահմանելու օգտին։

—

Տուր.—Կոմբի նախագահութեամբ բացվեց արմատական կուսակցութեան կօնգրէսը։ Մասնակցում են հազար պատգամաւոր։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՄՕՍԿՎԱՅԻ ՈՂՋԱՐԱԲՈՒԾԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

(Սեփ. հեռագիր)

Մօսկվա, 27 սեպտեմբերի

Սառուցման գործով զբաղվող համագումարը, լսելով Վասիլևսկի և Ալ. Քալանթարի զեկուցումները, որոշում կայացրեց հա-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՍՈՒԽՈՒՄԻ ՇՐՋԱՆԻ ՄԱՆՐ ԾԽԱԽՈՏԱԲՈՅԾՆԵՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ԾԽԱԽՈՏԱԲՈՒԾՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ *)

(Ա. Ճահնազարեանի)

Սուխումի շրջանի Գումիստինի և Գուդաուտի գաւառակի տեղական ազգաբնակութեան համար ծխախոտաբուծութիւնը զբաղմունքի գլխաւոր և, կարելի է ասել, միակ առարկան է։ Երկրին հարուստ ապագայ խոստացող գիւղատնտեսական այս ճիւղը համեմատաբար մօտիկ անցեալում հանդէս եկած բան է, որ հետզհետէ ընդարձակվելով խոշոր ծաւալ է ստացել արդէն։

Ծխախոտաբուծութեամբ պարապում է շրջանիս տեղական ոչ թէ աբխազ ազգաբնակութիւնը, որ վարժ չէ չափազանց ծանր և քայքայիչ աշխատանքի, ինչ որ պահանջում է ծխախոտի մշակութիւնը, այլ եկւոր տարրը, գլխաւորապէս Թիւրքիայից եկած յոյներն ու հայերը և մասամբ ռուս գաղթականները։

Միջին կարողութեան տէր իւրաքանչիւր տուն միջին թւով երկու դեսեատինանոց տնկարան ծխախոտ է մշակում։ Ծխախոտաբուծութիւնը կատարվում է հետևեալ պայմաններում։

Հողաբաժինը քարերից և զանազան բոյսերի արմատներից մաքրելու աշխատանքն սկսվում է համարեա թէ փետրվար ամսից. իսկ մարտից սկսվում է ցելը, կրկնահերկը և ընդհանրապէս հողաբաժինը տնկարանի վերածելու, ֆիդանները (փոխադրելի տունկը) բուծանելու և այս կարգի նախապատրաստական զանազան աշխատանքներ։ Ապրիլի երկրորդ կէսից արդէն ձեռնարկում են ծխախոտի տնկերի փոխադրութեան՝ տնկոտելով պատրաստված հողաբաժինների վրա. այս աշխատանքը տևում է մօտ չորս շաբաթ, երբեմն էլ մի փոքր աւելի։ Տունկը փոխադրելուց երկու-երեք շաբաթ անց՝ սկսվում է տնկարանի առաջին քեշումը (тахание), այսինքն տնկարանը մաքրում են ամեն տեսակ աւելորդ խոտերից և մատղաշ տնկերի շուրջը եղած հողը քրքրում ու արմատների վրա կիտում։ Քեշելը ծխախոտի մշակութեան ամենից դժուար ու թանգ նստող աշխատանքներից մէկն է։ Առաջին քեշումից կարճ ժամանակ անցնելուց յետոյ սկսվում է երկրորդը, որ վերջանում է մօտաւորապէս յուլիսի մէջերքում։ Երկրորդ քեշումից անմիջապէս յետոյ ձեռնարկում են արդէն ծխախոտն հաւաքելու, այսինքն սկսվում է տերևների առաջին քաղը։ Ամեն մի տնկարանում տերևաքաղը լինում է երեք կամ չորս նուագ և այնպէս, որ մի քաղից յետոյ, գրեթէ իսկոյն, սկսվում է յաջորդ քաղը։ Տերևաքաղի և թել կազմելու (տերևները թելի վրա շարելու) աշխատանքը տեղի է ունենում միաժամանակ հետևեալ կարգով. օրվայ զով ժամանակը բանւորները տնկարանում տերև են քաղում, իսկ օրը տաքանալուց յետոյ նստում են յատուկ ծածկոցի տակ և այդ օրվայ քաղածն, ամեն մէկն իրանը, սկսում են թելի անցկացնել առանց որևէ տեսակաւորման։

Իւրաքանչիւր տնկարանում շինած են յարմարաւոր, ընդարձակ յատուկ սարայներ, որտեղ թելի անցրած ծխախոտը կախում են յատուկ ձողերի վրա։

Ծխախոտ չորացնելու այս գործարանը բաղկացած է 3—4 բաժանմունքից, նայած տնկարանի մեծութեանը. ամեն մի բաժանմունքի լայնութիւնն է 7 արշին, երկարութիւնը 12, իսկ բարձրութիւնը 4։ Ամեն մի բաժանմունքի առաջ մարզակներից (балка) շինած են յատուկ վագօնետկաներ, որոնք տրապեցիայի նմանութիւն ունեն և այնպէս են յարմարեցված, որ վրանները ծխախոտի թեռերը կրող և սարայում եղող ձողերն ամենայն հեշտութեամբ այս տրապեցիաների վրայով սահում գնում են դուրս արևի տակ, որպէսզի ծխախոտի թեռերը չորանան. իսկ գիշերը ծխախոտը խոնաւութիւնից ազատ պահելու համար նորից բոլոր թեռաւոր ձողերը պէտք է ժողովել սարայի տակ. այնպէս որ տնկարանատէրը շարունակ աչալուրջ հսկողութիւն պիտի ունենայ, որ ծխախոտը անձրևի տակ չը մնայ, այլ ժամանակին հաւաքվի սարայի տակ։

Երկու դեսեատինանոց տնկարանների սարայներն իրանց բոլոր յարմարութիւններով բռնում են 400 քառ. սաժէն կամ $^1/_6$ դեսեատինից ոչ պակաս տարածութիւն։

Ամեն մի տերևաքաղի տերևները չորացնում են առանձին և քաղից անմիջապէս յետոյ. չորացնելու գործողութիւնը լաւ եղանակին տևում է 15—20 օր, իսկ անձրևային եղանակին 30—40 օր։ Իւրաքանչիւր քաղի չորացած ծխախոտը թողնում են սարայի տակ, մինչև որ չորանան վերջին քաղի տերևները։

Չորացնելու աշխատանքը վերջանում է հոկտեմբերին, որից յետոյ սկսում են չորացած ծխախոտը տեսակաւորել, տեմեթ անել (попушовка) և դենգ կապել (тюкование). դենգ կապելը վերջանում է դեկտեմբերին, յունվարին և երբեմն էլ փետրվարին։

Մի դեսեատինանոց տնկարանից միջին բերքի ժամանակ ստացվում է մօտ 35 փութ ծխախոտ, եթէ ծխախոտը Սամսոնի ծխախոտից է, իսկ եթէ Տրապիզոնի է, 50 փութ. Սամսոնի միջին գինը բոլոր չորս տեսակի համար հաշւում են փութը 12 ր., իսկ Տրապիզոնինը 8 ր., այնպէս որ միջին թւով իւրաքանչիւր դեսեատինից ստացվում է մօտ 400 ր. ընդհանուր մուտք։

Ծխախոտի մշակութեան ոչ շտապողական աշխատանքները կատարվում են տնկատիրոջ և իր ընտանիքի անդամների ձեռքով, իսկ շտապողական աշխատանքների, օրինակ, տունկերը փոխադրելու, քեշելու, տերևները քաղելու և անյապաղ թելի անցկացնելու և այլ նման բաների համար վարձում են բանւորներ, որոնք մեծ քանակութեամբ գալիս են Թիւրքիայից գարնանը վաղ և վերադառնում են հայրենիք ծխախոտը ժողովելուց յետոյ։

Աշխատութեան պայմանները մօտաւորապէս այս են. իւրաքանչիւր բանւոր տունկերի փոխադրութիւնից սկսած մինչև ծխախոտի վերջնական քաղը՝ մեծ մասամբ աշխատում է միևնոյն գործարանատիրոջ մօտ, հացը ջուրն էլ վերջինիցս և պարիկ, միայն երբեմն ստանալով չնչին գումար ամենաանհրաժեշտ կարիքների համար։ Վերջնական հաշւեյարդարութիւնը տեղի է ունենում աշնանը, ծխախոտն ամբողջապէս ժողովելուց յետոյ, երբ արդէն բանւորն անհրաժեշտաբար պիտի հայրենիք վերադառնայ։ Ծխախոտի տունկերը տնկելու և քեշելու համար բանւորն օրավարձով է աշխատում և օրական ստանում է 80 կ. մինչև 1 ր. 20 կ., իսկ տերևները քաղելու և թելին շարելու համար ստանում է 8—10 կ. իւրաքանչիւր թեռին, որի երկարութիւնն է 7 արշին։

Այսպէս ուրեմն միջին տնկարանատէրը իր ընտանիքի անդամներից երեք հոգու ծխախոտի մշակութեան վրա բանեցնելով վարձու բանւորներին մօտաւորապէս 300 ռուբլի պէտք է վճարէ, եթէ տնկարանը երկու դեսեատինանոց է, բայց որովհետև այս գումարից մօտաւոր հաշւով $^1/_4$-ը արդէն զանազան ժամանակներում վճարված է լինում բանւորներին դեռ ևս մինչև աշնան վրա գալը, ուստի կը նշանակէ, որ մի այսպիսի միջին ծխախոտաբոյծ աշնանը (սեպտ. 15-ից մինչև հոկտեմբերի 15-ը) կարիք կունենայ մօտ 225 ռուբլու՝ հաշիւը բանւորների հետ փակելու համար։

Այս միջոցներին ծխախոտը թէև ժողոված և թելի վրա շարած՝ սարայումն է, բայց տակաւին պատրաստ չէ վաճառքի հանելու համար, դեռ պէտք է չորացնեն, տեսակաւորեն, տեմեթ անեն և նոր արդէն դենգ կապած փոխադրեն քաղաք ծախելու։ Մինչդեռ թիւրքահպատակ բանւորներն շտապում են հայրենիք և համաձայն բանւորական պայմանադրութեան վերջնական հաշւեյարդարութիւն են պահանջում։

Ո՞րտեղից փող ճարեն մարդիկ։ Շատ տեղերում դեռ ևս հասկացողութիւն չունեն մանր վարկի հաստատութիւնների մասին։ Մի քանի տեղեր էլ թէև գոյութիւն ունեն վարկի և փոխատու-խնայողական ընկերութիւններ, բայց այն փոխատւութիւնը, որ արվում է ընկեր տնկարանատէրերին ի հաշիւ գրաւականով չապահովված վարկի, բնաւ չէ կարող ծածկել ծխախոտի տնտեսութեան պահանջած բոլոր ծախսերը։ Այս փոխատւութիւնները, որոնց առաւելագոյնը 100—200 ռուբլուց չէ անցնում, բաւական չեն մինչև իսկ բանւորների սնունդ ձեռք բերելու, վրաններ գնելու և զանազան մանր մունր բաների համար, որոնք հարկաւոր են ծխախոտի մշակման ընթացքում. իսկ երկու դեսեատինանոց տնկարան մշակող միջին ծխախոտաբոյծի համար հարկաւոր կը լինի ձեռք բերել գէթ 400—500 ռուբլի, որպէսզի նա կարողանայ մի կերպ կառավարվել մինչև ծխախոտը շուկայ հանելը, այսինքն մինչև յունվար և փետրվար ամիսները։

Սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսները

---

*) «Сух. Лист.»-ից.

մագումարներից մէկը կայացնել Թիֆլիսում։

Ոչխարաբուծական համագումարը երկու օրով երկարեցված է։

Ցուցահանդէսը երէկ փակվեց։

Ամերիկա տանելու համար կան ոչխարներ գնողներ։

Ցուցահանդէսով հետաքրքրվում էին գերմանացիները, որոնք հոկտեմբերին կայցելեն Կովկաս։

Էկսպօնենտներից շատերը ստացել են պարգևներ։

Կովկասյիններից պարգևներ ստացել են Տրիօնդաժիլով, Դոբըրնին և Եռէզով։

## ՍՏՈՒՄ Է ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ԿԱՃԿԱՃԵԱՆԸ *)

Ասված է՝ «Մեռելի եռեից սուտ կը խօսեն»։ Եւ այսօր խօսում է Ներսիսեան դպրոցի հոգաբարձու պ. Կաճկաճեանը, վերագրելով գանձապահ Ալիխանեանի ընտրութիւնը հանգուցեալ Սաթունեանին։

Հայր Շերմազանեանի հեռացումից և Ալիխանեանին հրաւիրելուց մի քանի օր յետոյ՝ գնացել էի հանգուցեալ սրբազանի մօտ, որպէս հոգաբարձական ժողովի նախագահի, որպէսզի Նորաշէն դպրոցի փաստի գործը կարգադրէի, որպիսի գործը ստանձնել էի ես։

Ի միջի այլ խօսակցութեան, հետաքրքըրվում էի իմանալ հ. Շերմազանեանի հեռացման դրդապատճառը, որը 23 ձիգ տարիներ իր օրերը մաշելով դպրոցական կեանքում՝ ծառայել է ամենայն հաւատարմութեամբ և շահաւէտութեամբ, ուստի և հարցրի.

— Սրբազան հայր, ինչ էր պատճառը, որ հեռացրիք հ. Շերմազանեանին։

— Ես չը հեռացրի, այլ հոգաբարձութիւնը՝ բոլորովին ի զուր և անհիմն պատճառաբանութեամբ, — պատասխանեց Սաթունեան սրբ.։ — Ուզեցին իրանց մարդը մէջ բերել և. բերեցին, որի ընտրութեանը ես մնացի ձեռնպահ։

— Իսկ, սրբազան հայր, ում մէջ բերած մարդն է Ալիխանեանը և ով է երաշխաւորել, քանի որ դրա համար վատ են խօսում, որ յայտնի կարտեօժնիկ է, մի օր կարող է վատնել դպրոցի փողերը։

— Դա քո Լազր Ծաղէլիչի (Տիգրանեանի) մարդն է և նրա մէջ բերածը. ինչ որ ինձ ես ասում, գնա նրան ասա։

Սեպուհ պարտք համարեցի նոյնութեամբ առաջ բերել հանգուցեալի խօսքերը։

Երկրորդ՝ ոչ թէ հոգաբարձութիւնն է պարզել Ալիխանեանի կատարած զեղծումը, ինչպէս ճգնում է հաւատացնել հոգաբարձութեան «պաշտպան» Կաճկաճեանը, վերջնական ստուգման ժամանակ (որ հիմնարկութեան մէջ է ընդունված, որ տարէնը [illegible] անգամ ստուգվի գանձարանը), այլ պարզել է հաշւապահ Մկ. Էքսիւզեանը։

Եթէ, Աստուած մի արասցէ, Էքսիւզեանը — որի ազնւութեան վրա ոչ մի կասկած տանել չէ կարելի — համամիտ լինէր Ալիխանեանին, ինչ կը լինէր այդ ժամանակ դպրոցի դրութիւնը և ինչով իրան կարդարացնէր Ներսիսեան դպրոցի ներկայ հոգաբարձութիւնը, որի կազմը, բացառութեամբ մի 2—3 հոգու, ընտրվել է միայն ընտրվելու համար և բազմել հոգաբարձական աթոռների վրա՝ առանց իր խղճին հաշիւ տալու։

Երրորդ՝ ինչով է արդարացնում իրան անպարտաճանաչ, անհոգ և անուշադիր հոգաբարձութիւնը, որ Ալիխանեանը յունվար ամսին դուրս է տանում 1000 ր., մարտին ևս նոյնքան, և այնուհետև մինչև Էքսիւզեանի գլխի ընկնելը՝ պարբերաբար 5800 ր.։ Եւ նա՝ այդ հոգաբարձութիւնը օգոստոս ամսին վճիռ է կայացնում «վասն անարատ և անբիծ ծառայութեան» աւելացնել Ալիխանեանի ռոճիկը։

Ինչով կարող է արդարացնել իրան այն «շրջահայեաց» հոգաբարձուն, որը ստորագրել է չէկը, չը գծելով մնացած ազատ տեղերը, որպէսզի Ալիխանեանը չը կարողանար կեղծել, որը, օրէնքի տեսակէտից՝ չը պէտք է ճանաչվի կեղծիք, քանի որ գրըված է հոգաբարձուի ստորագրութիւնից առաջ, այլ ոչ յետոյ, որ կեղծիք համարվի։

Արդեօք այդ ստորագրող հոգաբարձուն չը պէտք է համարվի մեղսակից և նստի Ալիխանեանի հետ յանցաւորի նստարանի վրա և դատվի եթէ ոչ իբրև կեղծարար, այլ իբրև անհոգ և անուշադիր դէպի իր պարտականութիւնը։

Մի քանի խօսք ևս շուկայի արդիւնքի վերաբերմամբ։ Միանգամայն սուտ է Կաճկաճեանի առաջ բերած պատճառաբանութիւնը, թէ ինչու այժմս շուկան բերում է 80 ր., այլ ոչ թէ 15 ր.։

Յայտնի բնաւորութեան տէր մարդիկ միշտ փուշն ուրիշի ձեռքով են քաղում, որպէսզի իրանց ձեռքերը չը ծակվեն։ Այդպէս էր անում և դպրոցի այժմեան կառավարիչ Կ. Գասպարեանը, ժողովելով շուկայի արդիւնքը ծառաների ձեռքով, որոնց օրօք դարձեալ շուկայի արդիւնքը մնում էր 80—90 ր., բայց մտնում էր դպրոցի գանձարանը 10—15 րուբլի։

Իսկ թէ ուր էր գնում մնացեալը, դա շատ լաւ յայտնի է իրան կառավարչին և նրան հովանաւորողներին...

Աշտարակի և Երևանի հայ հասարակութիւն, տես բանն ուր է հասել, որ ձեզ լաւ յայտնի ակցիզնի Կարապետը գրում է՝ «տեսնելով պատիւս արատաւորված, դատի եմ կանչում «Մշակի» և «Тифлисскій Листокъ»-ի խմբագրութիւններին»։

Ինչու էք լռել, խօսեցէք. պարտական էք խօսելու ի շահ մեր մայր դպրոցի։

Խօսի՛ր և դու, պ. Գաբրիէլ Մնացականեան, որպէս հասարակական ազնիւ գործիչ, որպէս լաւ հայ, որպէս անբիծ փաստաբան, որ առիթ ես ունեցել դատարանի առաջ ձրիաբար պաշտպանելու այն անմեղ բազմանդամ ընտանիքին, որին կործանեց ակցիզնի Կարապետը իր դաւաճանօրէն կազմած արձանագրութիւններով։ Կործանեց մի բարի ընտանիք, որը յանցանք էր ունեցել ամիսներով որպէս որդու հովանաւորել ակցիզնի Կարապետին։ «Սայլը [illegible]։ Այսպէս է անում և Կարապետ Գասպարեանը և նրա գլխին թագաւորող պատահական հոգաբարձութիւնը։

Դատարանի վախով են ուզում լռեցնել արդարութեան ձայնը, «ծածկադմբոց» անել կատարված ցաւալի իրողութիւնը, ոլորմոլոր ճանապարհներով արդարացնել իրանց յանցանքները, անտարբեր և անպարտաճանաչ վերաբերմունքները դէպի հասարակական հիմնարկութիւնը։

Աւելի և աւելի ցաւալին այն է, որ «Հորիզոնը», արիւն քրտինք մտած՝ թոզ է փչում հասարակութեան աչքին, ցանկանալով քօղացնել հասարակութիւնը, արդարացնելով հոգաբարձութիւնը, նրա լռութիւնը՝ կատարված զեղծման վերաբերմամբ և թեթևահարելով՝ ուզում է հաւատացնել հասարակութեանը, որ դա միջոց եղաւ «Մշակի» համար նախընտրական պայքար մղելու առաջիկայում ընտրվելիք հոգաբարձութեան տեսակէտից։

«Հորիզոնի» խմբագրութիւնը բնաւ կորցրել է և խիղճը, և ամօթ ասված բանը։ Նա պատրաստ է ամեն ստոր միջոցների դիմելու, որպէսզի դիմացինի արդար և անկեղծ ձայնը լսելի չը լինի հասարակութեանը, գտնելով որ «Մշակի» այդ մերկացումներն անում է յանուն թայֆայական շահերի։

Այդ նոյն խմբակցութիւնը ջանում է և արդարացնել դպրոցի 130,000 դեֆիցիտը, որը՝ ցաւօք սրտի պէտք է ասել՝ ոչ թէ այդքան է, այլ 200,000 ր. անց է, հիմնվելով պատգամաւորական ժողովի վրա։ Իսկ ինչ էր ներկայացնում իրանից պատգամաւորական ժողովը. ընտրված էր նա ժողովրդի ձայնով, նրա քուէով, թէ Խաժակների հրամաններով և բռունցքներով, — այդ ամենքիս համար պարզ է և այդպիսի մի պատգամաւորական ժողով ոչ մի գին և արժէք ունենալ չէ կարող ներկայումս, երբ պէտք է տեղի տուվի հարազատ ժողովրդի քուէներին և նրանցով ընտրվի հոգաբարձութիւնը։

Երկար կանգ կառնէի և փաստօրէն կը պարզէի հասարակութեանը ներկայ հոգաբարձութեան ինչ լինելը, բայց քանի որ պէտք է տեղի ունենայ սինօդական ստուգումն, յարմար է լռել և սպասել։

Սակայն, ըստ իս, նախ քան այդ, նպատակայարմար և միանգամայն օրինական կը լինէր, որ կազմալուծվէր ներկայ հոգաբարձութիւնը, որի յանցանքը ակներև է և ապացուցված Ալիխանեանի և Գասպարեանի շնորհիւ, և ապա տեղի ունենար սինօդական ռեվիզիան։ Ահա այդ ժամանակ ամեն ինչ իր իսկական մերկութեամբ և արժէքով կը պարզվէր հասարակութեանը։ Ամեն մի վարչութիւն այդպէս է վարվում յանցաւոր պաշտօնեաների հետ. նախ հեռացնում է և ապա քննում նրանց գործած յանցանքները և ըստ այնմ ենթարկում դատի։ Պէտք է և այդպէս վարվի Էջմիածինը, որպէս մի օրինակ լինի միւս հոգաբարձուներին։

Սաքանազ Տէր-Սիմէօնեան

---

*) Ներկայ յօդուածի ամբողջ պատասխանատւութիւնը թողնում ենք յօդուածագրի վրա։ Խմբ.

## ԸՆԹԵՐՑՈՂԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՑ

### XXXII

Քաղաքական աշխարհի երկնակամարը ծածկված է մութ ու խաւար ամպերով, որոնք օր-օրի վրա քանի գնում՝ աւելի խտանում են և կապարի ծանրութեամբ իջնում երկրի վրա։

Բաւական է մի փոքրիկ, աննշան կայծ և հրդեհը կը բորբոքվէ ամբողջ Եւրոպայում սոսկալի ուժով և նրա բոցերը կը տարածվեն արևելքից արևմուտք և հարաւից հիւսիս։

1912 թւականը ճակատագրական մի տարի է։

Ուղիղ մի դար առաջ ամբողջ Եւրոպան դարձեալ կլանված էր պատերազմի ահեղ բոցով։ Մեծ աշխարհակալ Նապոլէոնի յաղթական զօրքերը մահ ու սարսափ տարածելով իրանց չորս կողմը՝ յաղթական քայլերով անցնում էին Եւրոպայի մի ծայրից միւսը։

Հազիւ մի դար է անցել այդ օրվանից. դեռ չեն դադարել ամբողջ Ռուսաստանում հնչվող ցնծութեան աղաղակները Հայրենական պատերազմի և ազատութեան 100-ամեայ տարեդարձի առիթով. դեռ քաղաքակիրթ աշխարհը չէ կարողացել ազատվել ռուս-ճապոնական պատերազմի սոսկալի արհաւիրքների մղձաւանջից, Թուրք իտալական պատերազմի արեան գետերն են հոսում դեռ ևս, որի դադարելուն է սպասում անձկութեամբ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը. և ահա մի նոր աւելի արիւնահեղ, աւելի սոսկալի պատերազմի ուրուականն է կանգնում տանջված ու հիւծված մարդկութեան հանգչող աչքերի առաջ, պատերազմ, որը սպառնում է համաեւրոպական դառնալ և 1812 թւականի արհաւիրքները նորից աշխարհ բերելու։

Դարերի ընթացքում սովորութիւն և օրէնք է դարձել մարդկութեան համար ամեն մի վէճ, ամեն մի հաշիւ միմեանց հետ բռունցքի և սրի ուժով վերջացնելու, և այդ սովորութիւնը այնքան խոր արմատներ է ձգել նրա մէջ, որ նրա առաջն առնել չեն կարողանում ոչ հազարաւոր մորթոտվող մարդկանց ճիչն ու աղաղակը, ոչ անվերջ հոսող մարդկային արեան գետերը. և դարերի ընթացքում երկրագունդը մի հսկայական սպանդանոցի է վերածվել, որտեղ մորթոտվում են մարդիկ, իրանք էլ չիմանալով թէ ինչու համար...

Տասնեակ տարիներ են անցել այն օրվանից, երբ հնչվեց խաղաղութեան առաջին պիօներ Բերթա Զուտների աղաղակը՝ «Թող կորչի զէնքը»... Նրա փոքրիկ, արեան տառերով գրված գրքոյկը միլիոնաւոր օրինակներով են ցրվել երկրագնդի ամեն կողմերում և ամեն լեզուներով. տարիների ընթացքում գոյութիւն ունի Ռուսաց Կայսրի նախաձեռնութեամբ հրաւիրված Հաագայի կոնֆերենցիան. խաղաղասէրների միութիւնը ամբողջ ուժերով գործում է պատերազմների առաջն առնելու համար. այդ բոլորը մարդկութեան համակրանքն են գրաւում. և սակայն այդ չէ արգելում նոյն մարդկութեանը ամեն անգամ էլ իր փոքրիկ, չնչին ու աննշան վէճերի համար զէնքի ուժին դիմելու։

Եւ «խաղաղութիւն» աղաղակող ձայները ամեն անգամ էլ խեղդվում են, անհետանում զէնքերի շառաչիւնների, թնդանօթների որոտների մէջ։

Եւ ահա այսօր, կուլտուրական զարգացման ամենաբարձր աստիճանի վրա գտնվող մարդկութիւնը տենդային եռանդով պատրաստվում է նոր արեան գետեր հոսեցնելու, մարդկային նոր սպանդանոցներ ստեղծելու։

Եւ ում, ինչու համար։

Միթէ նա դեռ չէ յոգնել դարերի ընթացքում օր-օրի վրա մարդկային մսակոյտերը տեսնելուց. միթէ նրա ականջները չեն խլացել անվերջ հնչվող լաց ու կոծի աղաղակներից և նրա ծարաւը չէ յագեցել անվերջ հոսող արեան գետերից։

Եւ երկնակամարի վրա հաւաքված սև ու մռայլ ամպերը աւելի ու աւելի են խտանում ամեն րոպէ սպառնալով արեան ու արցունքի հեղեղներ թափելու տանջված ու հիւծված, անվերջ ցաւերի բեռան տակ տնքացող երկրագնդի վրա։

Բայց մինչև երբ։

Միթէ մի օր վերջապէս մարդկութիւնը չէ զգալու, թէ ինչ սոսկալի դրութիւն է ստեղծել իր համար մշտական պատերազմների անվերջ մղձաւանջի տակ ապրելով, և թօթափելով իր վրայից դարերի անէծքը ուժգին ձայնով չէ արտասանելու Բերթա Զուտների խօսքերը։

«Թող կորչի զէնքը»... բաւական են այսքան արեան գետերը։

Վաղարշակ Թումանեան

Բագու

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

### Անհամապատասխան եղանակներ Շուշում

Շուշի, 19 սեպտեմբերի

Վերջերս Ղարաբաղի համար անհամապատասխան եղանակներ եղան, սաստիկ շոգեր, արևի սուր ճառագայթներ։ Ամառը անցաւ առանց անձրևների, սաստիկ երաշտը այրեց, խանձեց երկիրը և ամբողջ բուսականութիւնը ջրերի չը տեսնված պակասութիւն է զգում։ Սրեր անձրևի այդ պակասութիւնն է, որ ժողովրդի մէջ մուտք է գործել աչքացաւը, երեխաների փորհարինքը և այլ զանազան ցաւեր։ Գիւղացիների համար անցկացաւ ս. Խաչի պասը, պէտք է սկսէին վար ու ցանքսը, պէտք է սևանար երկրի երեսը, ցելերը պէտք է հերկվէին, արդէն ս. Խաչի շաբաթապասը դրա առաջին նշանն է, ժամանակացոյցը։ Սակայն երկիրը այրված է և հերկվելու հնարաւորութիւն չը կայ։ Հողի մէջ խոնաւութիւն չը կայ սերմը աճեցնելու, և գիւղացիները կանները խաչած՝ նայում են, թէ երբ երկինքը կը խղճայ և իրանց անձրև կուղարկէ։

Ամսիս 16-ից եղանակը յանկարծ փոխվեց, քաղաքս պատեց թանձր ամպով, հեռուն չի երևում։ Այնպիսի ցրտեր են, որ կարծես ձմեռվայ ցուրտ օրերն են։ Մարդիկ փակել են տների բաց պատուհանները, հագել են ձմեռվայ հաստ և փափուկ հագուստ։ Քամիները կատաղօրէն փչում են աջ ու ձախ, ծառերի տերևները թափվում են, և արդէն զգում ես, որ ոչ թէ իրօք աշունն է սկսվել, այլ խստաշունչ ձմեռը։ Անձրև տեղաց շատ թեթև, այնպէս որ ցանկալի օգուտը չի տայ երկրին. հարկաւորվում է յորդ անձրև, փափկացնելու գարնան պատրաստած ցելերը։ Արդեօք անձրևներ կը գան, թէ ձիւն, որոշել անկարելի է. Ղարաբաղի համար բնութեան տարերքը խառն են, անորոշ. գարնանը ձիւն է գալիս, աշունքին նոյնպէս. իսկ ձմեռը անցնում է գարնանպէս և ընդհակառակը՝ երբեմն այնպիսի խիստ ձմեռ է լինում, որի նմանը տեսած չենք լինում։ Ղարաբաղը լեռնոտ երկիր է, ուստի և ունենում է տարբեր և անորոշ եղանակներ։ Ինչ էլ որ լինի, ներկայումս ժողովրդի ցանկութիւնն է, պահանջն է յորդ անձրևներ, որից կանհետանայ ծանր երաշտը, տիրող աչքացաւը, փորհարինքը և այլ ախտերը, ջրերն էլ կառատանան, իսկ գիւղականները իրանց պատրաստած սերմը կը ձգեն երկիրը, ապագայ ծով կարիքների համար։

Օր. Աստղիկ Տէր-Յովհաննիսեան

### Նիյսկի հայ գաղութի վիճակը

Նիյսի (Կուբ. շրջան), 15 սեպտեմբերի

Մեր շրջանի հայաբնակ տեղերից և ոչ մէկը այնքան անբաղդ և թշուառ վիճակում չէ, որքան Նիյսի քաղաքը իր հայ բնակչութեամբ միասին։ Եւ չը նայելով այն բանին, որ Նիյսկի վաճառականութեան գործում Դօխով, Մուղդուսիէվ և ուրիշները աչքի են ընկնում իբրև կապիտալիստներ, բայց նրանք մի փոքր շրջահայեաց չեն դէպի իրանց սեփական-ազգային գործը. դա շատ ցաւալի է։ Նիյսկի հայերը չունեն դպրոց. իսկ ազօթատան մասին ամաչել պէտք է։ Ճիշդ է, մեր նախկին ծխատէր Մարգար քահանան բացի լանջախաչից ստացել էր նաև վարդապետական խաչ, բայց այդ պարգևը չիմացանք, թէ ինչու համար էր, քանի որ մեր ծխ.-համայնական գործերը հէնց նրա օրով էլ մնացել էին աննախանձելի դրութեան մէջ։

Քանի դեռ ուշ չէ, թէ առաջնորդը և թէ ժողովրդի առաջաւոր տղաները թող մի թեթև հաշիւ տան իրանց խղճին և ըստ այնմ ձեռնամուխ լինեն տեղիս դպրոցական գործի զարգացմանը։

Մատթ. Սարգսեան

### Մի համակրելի որոշում

Նոր-Բայազէտ, 14 սեպտեմբերի

«Մշակի» № 190-ում գրել էի, որ հասարակապատկան արօտները այս տարի աճուրդախօսութեան մէջ եկամուտ տուին քաղաքին 1750 ր.։ Վերջերս քաղաքային աւագը ժողովի էր հրաւիրել հասարակութեանը այդ գումարի գործադրութեան առիթ՝ քաղաքի կարիքների համար։ Ժողովը նախագահ Գ. Արծրունու մասնակցութեամբ վճռեց գործադրել այդ գումարը հետևեալ կարգով. 1) 1000 ր. միանուագ տալ հայոց ծխ. դպրոցի հոգաբարձութեանը՝ իբրև նպաստ աղքատիկ ուսումնարանի և ազատել ժողովուրդը պրոգրեսիվ տուրքից, որը տարիներից յետոյ դարձեալ մասամբ մնում է անվճար։ 2) 100 րուբլով ծածկել այն ծախսը, որ մեր քաղաքի հասարակութիւնը նոյնպիսի մի ժողովում որոշում էր կայացրել քաղաքիցս տեղափոխվող բժ. Պ. Ջաքարեանցին մի նուիրաբերութիւն անելու մասին (արծաթեայ մատուցարան ընծայել)։ 3) Մնացեալ գումարով—650 ր.—մի նոր աղբիւր աւելացնել քաղաքային ջրանցքի գծի վրա, տանելով այդ աղբիւրը «Կալեր» կոչված թաղաբաժնում, ուր ժողովուրդը ջրի աւելի մեծ կարիք ունի և 4) այդ գումարի աւելին էլ գործադրել քաղաքային տան կիսատ մնացած շէնքի վրա։

Քաղաքային աւագ Արծրունին այդ վերաբերմամբ իր համակրութիւնը յայտնելով ժողովականներին՝ իրանց համակրելի որոշման առիթով՝ շուտով սկսելու է աղբիւրի գիծը երկարացնել երկաթէ խողովակներով և մի աղբիւր էլ աւելացնել անուշահամական ջրերի վրա և բաւականացնել այդ թաղի ծարաւի բնակիչներին, որոնք հազիւ են ազատվելու հորերի աղի-լեղի ջրի գործածութիւնից։

Իսկապէս դա մի համակրելի որոշում էր, որից գոհ են բոլոր քաղաքացիք, քանի որ քաղաքային դրամները յաճախ ծախսվել և ծախսվում են անտեղի և աննպատակ, այն ինչ աղբիւրը մնայուն է և նրա վրա ծախսվելիք գումարը տեղին է և նպատակայարմար։ Մի համակրելի որոշում, որը միանգամայն արժանի է գովասանքի։

Գ. Մինասեան

### Դրամական խուճապ Բագւում

Բագու, 22 սեպտեմբերի

Բալկանեան մանր պետութիւնների բաց ախորժակը ամենաանխիղճ կերպով փակեց վերջին օրերս 100,000-ների տէր լինել ցանկացողների ախորժակը, այնպէս որ առանց ուտելու, խմելու դրամական խուճապ ստացան։

Ուղիղ 4—5 ամիս առաջ բորսան միանգամայն փոխվեց, նաւթային ակցիաները ժամ առ ժամ սկսեցին աւելանալ. մեծ ու բոլոր ֆիրմաների փայերի գները անասելի չափերի հասան։ Բաւական է ասել, որ Մանթաշեանի ակցիան 135 րուբլուց 1—2 ամսվայ մէջ դարձաւ 635 ր.։ Բիրժային նապաստակները չփոթված ոչ միայն հարիւրաւոր մարդկանց ախորժակը գրգռեցին և հոգեպահոց ժանգոտված դրամները ակցիաների վերածեցին, այլ և իրանց ունեցած վերջին երկու րուբլանոց ամուսնական նշանի մատանիներն էլ ծախելով այս կամ այն ակցիայի կանխավճար տուին, յանձնեցին բանկային հաստատութիւններին այն յոյսով, որ երեք օրից յետոյ 1000 րուբլին պիտի աշխատէ 2000։

Էլ արհեստաւոր, մանրավաճառ, ծառայողներ, մանաւանդ ուսուցիչներ (ամառվայ պաշտ-

---

մանր ծխախոտաբոյծների ամենածայրայեղ կարիքի շրջանն են, որովհետև բացի բանւորներին ճանապարհ դնելուց անհրաժեշտ է տաք հագուստ-հագնելիք և զանազան ուտեստեղէն գնել տան համար և այսպիսով պատրաստ լինել վրա հասնող ձմրան համար։ Փողի կարիքն հսկայական է, բայց ճարելը դժուար։

Ահա յատկապէս այս ծանր ժամանակամիջոցումն է, որ տնկարանատէրերը դիմում են ծխախոտի խոշոր վաճառականներին և գործարանատէրերին և աղերսելով խնդրում, որ գնեն իրանց ծխախոտը և տան կանխավճար։ Վաճառականներն ուղարկում են գիւղ իրանց գործակալներին կամ կոմիսիօներներին, որոնք ման գալով սարայները ծանօթանում են տնկարանատիրոջ ծխախոտի որակին ու քանակին, գին են կտրում, առաջարկում են գնալ քաղաք և գրասենեակից ստանալ կանխավճարը։

Սովորաբար աննշան գներ են նշանակում, 30—40% պակաս շուկայի գնից. բայց և այնպէս ճգնաժամի մէջ եղող տնկարանատէրերը վազում են գրասենեակ կանխավճար ստանալու։

Գրասենեակում նախ և առաջ տնկարանատէրերից առնում են «ակցիզնի եարլիկը» և ապա առաջարկում են ստորագրել խորամանկութեամբ կազմված տպագիր պայմանաթղթին, որ խմբագրել է վաճառականն ինքը և որի բոլոր կէտերը խօսում են յօգուտ վաճառականի և կաշկանդում են տնկարանատէրերի ձեռներն ու ոտները. ապա միայն տալիս են կանխավճարը, որ ընդհանրապէս լինում է ամբողջ ծխախոտի արժէքի 40%-ը։

Կարևոր է շեշտել այն պարագան ևս, որ համաձայն տեղական սովորութեան՝ պայմանաթուղթը ստորագրվում է միայն ծախողի կողմից և այն էլ միայն մի օրինակ, որ մնում է գնող վաճառականի մօտ, իսկ տնկարանատիրոջը շատ անգամ չէ տրվում նոյնիսկ նրա պատճէնը կամ ուրիշ որևէ դօկումենտ։

Աւելի ևս տարօրինակ է այն հանգամանքը, որ տնկարանատէրը ստորագրում է վերոյիշեալ պայմանաթղթին առանց նախապէս լսած լինելու նրա բացերը և մէջն առանց յիշատակված լինելու ստացած կանխավճարը։ Այսպէս են պահանջում ինքնիշխան վաճառականները և այս բանին այնքան են վարժվել հէգ տնկարանատէրերը երկար տարիների ընթացքում, որ այս նրանց տարօրինակ չէ թւում։

Տպագիր պայմանաթղթի մէջ եղած կէտերից տնկարանատէրերի համար ամենից վտանգաւորն այն է, որի մէջ ասվում է, թէ ծախողը պարտաւոր է ենթարկվելու վաճառականի կողմից լինելիք նոր տեսակաւորման և նոր գնահատութեան. այս կէտի խոշոր նշանակութիւնը բացատրելու համար կարևոր է աչքի առաջ ունենալ այն, որ առհասարակ տեսակաւորման ժամանակ միշտ չորս տեսակի են բաժանում ծխախոտը, որոնցից առաջին երեք տեսակի համար նշանակվում է ընդհանուր մի գին, որ տատանվում է 12-ի և 24-ի միջև։ Իսկ չորրորդ տեսակը միշտ գնահատվում է առաջին երեք տեսակների գնից համարեա թէ քառակի ցած, այսինքն 3—6 րուբլի պուդը։

Եւ ահա յունվար և փետրվար ամիսներում, երբ տնկարանատէրը ծխախոտը տանում է վաճառականի սկլադը, արդէն վերջանում է կօմեդիան և սկսվում է տրագեդիան. վաճառականը ծխախոտն ընդունելու ժամանակ սովորաբար չէ համաձայնում կատարված տեսակաւորմանը, որքան էլ որ այդ տեղի ունեցած լինի ամենայն ճշգրտութեամբ. և միշտ առաջին երեք տեսակներից մի քանի հակեր անպէտք է յայտարարում և հաշվում չորրորդ տեսակի վրա, որի շնորհիւ իւրաքանչիւր հակ, որ կշռում է 3—4 պուդ, կորցնում է իր արժէքի համարեա 76%-ը։ Տնկարանատէրը, տեսնելով որ վաճառականն իրան թոյլ է տալիս ակնյայտնի անարդարութիւն և ճնշում է գործ դնում իր վրա, փորձում է բողոքել, բայց այդ դէպքում վաճառականի գործակալն յիշեցնում է նրան, որ նա իր տուած ստորագրութեամբ պարտաւոր է կամ հնազանդվելու վաճառականի տեսակաւորման և կամ հակառակ դէպքում վերադարձնելու իր ստացած կանխավճարը տոկոսով մէկտեղ և բացի այդ, պուդին 1 րուբլի էլ տուգանք, որից յետոյ միայն կարող է ապրանքը վաճառականի սկլադից հանել։ Բայց որովհետև նրա ստորագրած պայմանաթղթի մէջ նախապէս յիշված չէ եղել, թէ տնկարանատէրը քանի րուբլի կանխավճար է ստացել, ուստի այդպիսի անհամաձայնութեան դէպքում վաճառականը ամեն հնարաւորութիւն ունի իր տուած կանխավճարի կրկնակին մտցնելու պայմանաթղթի մէջ, և դատարանը այս կը համարի օրինական, որովհետև տնկարանատէրը ստորագրել է։ Եւ ահա յատկապէս այս պարագան լռեցնում է տնկարանատիրոջ բողոքը իսկոյն և ստիպում է լռելեայն համաձայնելու վաճառականի ամեն տեսակ թելադրանքներին։ Եւ այսպիսի անխիղճ շահագործումը շարունակվում է տասնեակ տարիներ։

Իրերի այս վիճակի արդիւնքն է, որ մի կողմից աստիճանաբար վատանում է տնկարանատէրերի տնտեսական դրութիւնը, իսկ միւս կողմից ծխախոտի վաճառականների, գործակալների և բազմաթիւ կօմիսիօներների հարստութիւնն աճում է առասպելական արագութեամբ։

***

Մցարա

(Վերջը միւս անգամ)

ճառով պարապ) թափվեցին բիրժա, լցվեցին փողոցների մայթերը՝ աշխատելով ժամ առաջ ձեռք բերել ակցիա։ Ցուլիս և օգոստոս ամիսներում դրանց թիւը այնքան բազմացաւ, որ բիրժային մօտիկ մի քանի փողոցներով կառքերն և անց ու դարձ անող քաղաքայիններն հնար չունեցան շարժվել, որի պատճառով քաղաքապետը կարգադրեց մայթերից քշել մարդկանց։

Այդ մի քանի ամիսներում շատերը, շատ աննշան դրամագլխով (300, 500, 1000 ր.) աշխատեցին 5000, 10,000, 20 և 30 հազար րուբլիներ։ Որոնք աւելի հեռատես էին, հեռացան բիրժայից ունենալով որոշ չափով ապահովութիւն. իսկ նրանք, որոնք հարիւր հազարներ և միլիոններ ձեռք բերելու տենչով տարված էին, շարունակեցին։ Ահա այդ վերջիններս են, որ այսօր դրամական խոլերայով հիւանդ են։

Աւելացած ակցիաները վերջին 10—15 օրվայ ընթացքում սկսեցին անխնայ կերպով պակասել։ 1000 րուբլով ձեռք բերած ակցիան, որի համար կանխավճար է տուել, այսօր դառել է 700 ր., այժմ ոչ ծախել է կարողանում, ոչ էլ պակասած դրամի %-ները մուծել բանկ. այսպէս զրկվում է կանխավճարից էլ, բաժինից էլ։

Այդ պարոնները առ. ժամը 9-ից մինչև 3-ը թափառում են բանկային տների շուրջը, սպասում են նորանոր հեռագիրների Պետերբուրգից, իսկ «անխիղճ» քաղաքապահ գորոդովոյը հաւի նման աջ ու ձախ քշելով աւելի է բորբոքում նրանց ցաւերը։

Որոշ շրջաններում պնդում են, որ ապագայ պատերազմի ուրուականն է, իսկ շատերը կապիտալիստ-բուրժուաների խաղն են համարում այդ։ Ս. Գարագաշ

## ԳԱՒԱՌԻ ՑԱՒԵՐԻՑ

Մեղրի, 16 սեպտեմբերի

Այն օրվանից, երբ անձնիմ գոնօսները սկսել են յաճախ մուտք գործել պաշտօնական հիմնարկութիւնները, այդ օրվանից աստիճանաբար մռայլվել սկսեց մեր առանց այն էլ անմխիթար գաւառական ճահճոտ կեանքի հորիզոնը։ Մարդ չը գիտէ, թէ այդ գոնօսների ակիզբը որտեղից է սկսվում, ուր է տանում և ուր կը վերջանայ։

Սակայն մի բան ամենքիս համար պարզ է, որ գոնօսները բղխում են ժողովրդի տականքներից, և ցաւալին այն է, որ այդ գոնօսների վրա մի առանձին ուշադրութիւն է դարձվում, և շատ անգամ անմեղ տեղից շատ լաւ գործեր են փչանում և շատերն են ի զուր վնասներ կրում, անուանարկվում...

Հասարակութիւնը գիտուք ընտրում է Հայկին տանուտէր. կազմվում է ընտրական արձանագրութիւնը, ստորագրում է հասարակութիւնը։ Հաշտարար միջնորդը իր զեկուցման հետ ներկայացնում է ուր հարկն է ի հաստատութիւն։ Եւ մինչև որ հաստատութեան թուղթը տեղ կը հասնի, մեր բարքերի արգիւնք գոնօսներն արդէն սեղանի վրա են։ Որովհետև անաչառ, կրթված, բարեխիղճ տանուտէրները կարող են կարելւոյն չափ սանձահարել, սահմանափակել ժողովրդի տականք տղրուկ վաշխառուներին, շահագործողներին, ուստի նրանք դիմում են գոնօսների օգնութեան, յայտարարելով որ Հայկը օրէնքի տակ է եղել մի ժամանակ, մասնակցել է յեղափոխական գործին, պարապում է վաշխառութեամբ և այլն։ Մի չարագուշակ օր յայտնում են, ի հարկէ՝ ամիսներ անցնելուց յետոյ, որ Հայկի ընտրութիւնը պաշտօնաւոր իշխանութիւնից չէ հաստատվում, անբարեյուսութեան պատճառով։ Կրկին ընտրութիւն... Էլի նոյն կոմէդիան... Իսկ մինչև այդ՝ ժողովրդի բաղդի հետ խաղում է բաղդախնդիրներից մէկը, որը հանգամանքների շնորհիւ դրութեան տէրն է դառել և գիտէ ինքը իր ժամանակաւոր պաշտօնն ու հրնձում է...

Երեք տարի է, որ Մեղրիի գիւղախմբային տանուտէրի ընտրութիւնն ու հաստատութիւնը վերև նկարագրված վիճակին է ենթարկված, և այդ 16 գիւղերի գիւղախմբային տանուտէրական պաշտօնը, ամիսներից ի վեր, վարում է երբեմն հովիւ ոչխարատէր, այժմ հարուստ, անկիրթ մի թուրք, իսկ 5 ամիս սրանից առաջ ընտրված նոր տանուտէր Ս. Վաչեանի հաստատութեան մասին ոչ մի լուր։

Նոյն դրութեան մէջն է և գիւղական կառավարութեան ուր շինելու հարցը։ Հասարակութեան մեծամասնութիւնը, ամբողջ պաշտօնէութեան հաւանութեամբ, կանգ է առել Մեղրիի վրա, ուր կայ Փէլդշէրական կայան, մանր վարկի ընկերութիւն, սպառ. ընկ., երեք-դասեան ծխական դպրոց, շաբաթական երկու անգամ ստացվում է պօստ, որը գալ տարվանից կը փոխարինվի տէրունականի, նոյնիսկ մեր մասի հաշտարար կառավարիչն էլ Մեղրիի անունով է. բայց ի՞նչ անէք, որ դարձեալ հրամայում են ժողովրդին շինական կառավարութիւնը շինել ոչ մի յարմարութիւն չունեցող թուրքաբնակ Լեհվազ գիւղում, որովհետև հաշտարար միջնորդը սկզբում զեկուցում է տուել ի նպաստ վերջինի։ Նա այդ արել է այն նպատակով, որ Լեհվազում հիմնել տայ պետ. տարրական դպրոց և նրա պահպանութեան ծախքը բաժանի անխտիր թուրք-հայ հասարակութիւնների վրա, բայց հայ հասարակութիւններն ունեն իրանց դպրոցները, որ հազիւ հազ են կարողանում պահպանել, հետևապէս հայերը իրաւացիօրէն չեն մասնակցի նրա պահպանման ծախսին։

Վերջին հրամանի առաջ—որ շինական կառավարութիւնը շինվի Լեհվազում—ժողովուրդը մնացել է շուար, չը գիտէ ինչ անէ. բացի այն որ ոչ մի չինովնիկ չի բարեհաճում Լեհվազում իջնել մնալ, ժողովուրդը համոզված է, որ իր արած մեծ ծախսը զուր պիտի կորչի և մի քանի տարուց յետոյ հարկ կը դատվի տեղափոխել կրկին Մեղրի, իսկ շինութիւնը կը ծառայի վաշխառու Բերքալա-Մէհտիին իբրև շերամատուն։ Սակայն այդ ամենից յետոյ թէ ներկայում, թէ ապագայում տուժողը լինելու է ժողովուրդը։

Յանուն արդարութեան, յանուն ժողովրդի շահերի, ում համար նա թանկ է, ում սրտին մօտ է, ով ձեռնհաս է, մեծ բարիք արած կը լինի ժողովրդին, որ կարողանայ նահանգապետի առաջ պարզելով իրերի դրութիւնը՝ այդ վճիռը փոխել տայ յօգուտ Մեղրիի, որ ժողովրդի մեծամասնութեան ցանկութիւնն է։

Ե. Վարդանեան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Մեկնեց Պետերբուրգ Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկով իր ամուսին կոմսուհի Ելիզավէտա Անդրէեվնայի հետ։ Կայարանում կոմսին և կոմսուհուն ճանապարհ դրին Վրաստանի էկզարխ Ինոկէնտին, փոխարքայի երկու օգնականներ գեներալ Շատիլովը և սենատոր Վատացին, նահանգապետը, զինուորական և հասարակական հիմնարկութիւնների ներկայացուցիչներ։

◆ Կովկասի փոխարքայի բացակայութեան ժամանակ նրա պարտականութիւնները կատարելու է փոխարքայի զինուորական մասի օգնական գեներալ Շատիլովը։

◆ Այսօր Թիֆլիսից կը մեկնէ Կովկասի փոխարքայի դիւանապետ հօֆմէյստէր Պետերսոնը։

◆ Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու Ռուդոլֆը այսօր մեկնում Պետերբուրգ։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը իրան ենթարկվող բոլոր հիմնարկութիւններում գործադրվող ուտելեղէն-մթերքները կապալով է տուել մի տարի ժամանակով։ Այդպէս էլ պիտի վարվեն բոլոր գործադրվող նիւթերի վերաբերմամբ։

◆ «З. Р.»-ը գրում է, թէ սխալ են այն տեղեկութիւնները, թէ իբր երդ.-հաւ. Լ. Անդրոնիկովը չէ կամենում քուէարկվել Պետական Դումայի պատգամաւորի պաշտօնի համար։ Լրագրի ասելով՝ վրացի հասարակութեան խոշոր մեծամասնութիւնը վճռել է անպատճառ Անդրոնիկովին ընտրել։ Լրագիրը վերջը աւելացնում է, որ իշխանի թեկնածութիւնը պաշտպանում են և հայերը, որոնք վրացիներից պակաս ծանօթ չեն նրա գործունէութեան հետ։

◆ Թիֆլիսի Հասարակական ակումբում այսօր, երեկոյեան ժամը 8-ին, Թիֆլիսի ազնուականների գիմնազիայի վերատեսուչ Մղիվանին կը կարդայ ռեֆերատ «Անգլը-պարլամենտական գործունէութիւնը Անգլիայում»։ Ռեֆերատից յետոյ կը կայանայ զրոյց և երաժշտական բաժին։

◆ Ստացանք Ն. Րօժկովի «Ժողովրդական ներկայացուցչութեան ձևերի մասին» թարգմ. ռուսերէնից Բարկէ։

◆ Միւռօնօրհնէքի առիթով բժշկապետ Բ. Նաւասարդեան մեկնեց Էջմիածին։ «Ազգբիւրի» և «Տարազի» խմբագրութիւնը լիազօրել է Նաւասարդեանին այսօր, սեպտեմբերի 29-ին, Վեհափառ Կաթողիկոսի անուանակոչութեան օրը մատուցանել «Ազգբիւր-Տարազի» և Տ. Նազարեանի կողմից շնորհաւորութիւններ Ամենայն Հայոց Կաթողիկոսին և մասնակցել իբրև պատգամաւոր խմբագրութեան կողմից թէ միւռօնօրհնէքի տօնակատարութեան ու թէ միւս հանդէսներին, ժողովներին ու խորհրդակցութիւններին, միաժամանակ զեկուցանելով Կաթողիկոսին, որ հոկտեմբերի 12-ին «Ազգբիւր-Տարազին» կից Գրական-Գեղարւեստական Սալօնում կը կայանայ հանդիսաւոր երեկոյթ, նուիրված՝ հայ տառերի 1500 և հայ տպագրութեան 400-ամեակներին։ Ի լուր հանդիսականների կը կարդացվի հակիրճ պատմական տեսութիւն հայ տառի և տպագրութեան շուրջ հայերէն, ռուսերէն և ֆրանսերէն։ Կը հրաւիրվեն Թիֆլիսի բոլոր ազգերի դպրոցական, կուլտուրական, գրական, երաժշտական ընկ. և հաստատութիւնների ներկայացուցիչներ։

◆ Մեզ խնդրում են տպել, որ այսօր, սեպտեմբերի 29-ին, երեկոյեան ժամը 7 և կէսին, քաղաքային դումայի դահլիճում նշանակված է հայ տպագրութեան 400-ամեայ յօբելեանի Թիֆլիսի յանձնաժողովի՝ իրան ընտրող բոլոր հայ հաստատութիւնների ներկայացուցիչների ընդհանուր ժողով։ Ժողովի օրակարգն է՝ զեկուցում Թիֆլիսի յանձնաժողովի գործունէութեան, հայ գրողների կովկասեան ընկերութեան բացման, առաջարկ յօբելեանը յետաձգելու մասին և հերթական հարցեր։

◆ Գանձակի գաւառի խոշոր կալուածատէրերի կողմից Պետական Դումայի պատուիրակներ են ընտրվել Քեամիլ-բէկ Զիւլգադարով և Մամէդ-բէկ Զիւթխանով։

◆ «Т. Л.»-ում կարդում ենք, որ Ղազախում կայացել է տեղական հայ և թուրք կալուածատէրերի լիազօրների ժողով Պետական Դումայի պատուիրակ ընտրելու համար։ Ընտրութիւններին ի միջի այլոց սևացել է երդուեալ-հաւատարմատար Ս. Ս. Յարութիւնեանը, որ, ինչպէս յիշեալ թերթն է գրում, համարվում էր Պետական Դումայի անդամութեան պաշտօնի թեկնածու։

◆ Կօջօրի ճանապարհի վրա զինված յարձակում գործելու մէջ կասկածով կալանաւորվածների թւում գտնվում են երկու անձն, որոնց դէմ ուժեղ կասկածներ կան։ Ուսափ և յիշեալ երկու հոգին կարևոր գործերի քննիչի կարգադրութեամբ դրվեցին Մետեխի բանտը։ Քննութիւնը շարունակվում է։

◆ Հասարակական խաղաղ կեանքը կրկին սկսում է փոթորկվել չարագործների զինված յարձակումներից։ Արդէն յայտնի դարձաւ ընթերցողին Կօջօրի ճանապարհի վրա տեղի ունեցած յանդուգն յարձակումը, Նուխու պօստի կողոպտումը, ըստ որում երկու դէպքում էլ եղան անմեղ մարդկանց զոհեր։ Այժմ հեռագիրը տեղեկացնում է, որ Երևանում, սեպտ. 27-ին, 5 չարագործներ Ցարսկայա փողոցի վրա յարձակվելով Թիֆլիսի առևտրական բանկի ճիւղի դրամատարի կառքի վրա՝ յափշտակում են 15,000 ր.։ Սպանվել է պահակը, իսկ դրամատարը և կառապանը վիրաւորվել են ծանր։ Ներկայումս կատարվում է համատարած խուզարկութիւն չարագործներին ձերբակալելու համար, որոնք դեռ ազատ են։

◆ Հոկտ. 1-ից Սօլօլակում՝ Պուշկինեան փողոցի վրա Մանթաշեանի տանը կը բացվի պօստ-հեռագրական բաժանմունք։

◆ Թիֆլիսի Ժողովարանը իր ձմեռային շինութիւնը կը տեղափոխվի վաղը։

◆ Ժողովված տեղեկութիւնների համաձայն՝ բամբակի բերքը Գանձակի և Բագուի նահանգներում, ինչպէս նաև Մուղանում բաւարար չէ՝ իր ժամանակին դաշտերը չոռոգելու պատճառով։

## ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

## ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

### Օպերա

Հինգշաբթի, սեպտեմբերի 27-ին, օպերային երկրորդ gala ներկայացմանը դրվեց Չայկովսկիի «Пиковая дама» օպերան։

Հռչակաւոր ռուս երաժշտագէտի այդ հանրածանօթ ստեղծագործութիւնը չունեցաւ այն կատարեալ աջողութիւնը, որ սպասվում էր։ Անաջողութեան գլխաւոր պատճառը պէտք էր համարել այն, որ անսամբլային կատարումները ընթանում էին աններդաշնակ, շեղումներ էին տեղի ունենում տէմպային կողմից, չը նայած դիրիժեօր Չէլեօնիյ ջանում էր հարթելու այդօրինակ դէֆեկտները։ Թէ խօրը և թէ բալէտը ուշադրութեան չէին առնում օրկեստրի ակոմպանիմէնտը, երգում էին՝ ինչպէս ուզում էին, պարում էին՝ ինչպէս բալէտմէյստէր Ուսցինսկին էր թելադրում։

Բեմական նորամուծութիւնների վերաբերմամբ էլ պիտի ասել, որ Մօսկվայի անուանի կոմսուհու դահլիճ-թատերաբեմը (II գործող.) այնքան էլ չէր համապատասխանում յիշեալ օպէրայի սովորական բեմայարդարութեան։ Միակ աջողված նոր դեկորացիան—վերջին գործողութեան մէջ կամուրջի և գետափի տեսարանն էր գիշեր ժամանակ։

Առանձին սօլիստների կատարումների վերաբերմամբ պիտի ասենք, որ Լիզայի դերում Ալէչկօ և Գէրմանի դերում Լազարէվ, ըստ սովորականին, շատ զգացված ու մեծ աւիւնով էին երգում ու խաղում, որի համար և արժանացան բուռն ծափահարութիւնների։ Ալէչկօ ստացաւ ծաղկեկողովներ ու ծաղկեփնջեր։

Տիկ. Լուկաշևիչ (Կոմսուհի), Կովէլկովա (Պոլինա), Լիւբչէնկօ (իշխ. Ելէցկի) և Կայդանով (կոմս Տօմսկի) նոյնպէս բարեխղճութեամբ կատարեցին իրանց ստանձնած պարտիները։

Չը նայած գները բենեֆիսային էին, այնու ամենայնիւ թատրոնը լի էր հասարակութեամբ։ X.

—

### Ժողովրդական Տան թատրոնում

Անցեալ տարի Արտիստական թատրոնում ներկայացումներ տուող Բարատովի և Բելաեվի խմբի շնորհիւ Թիֆլիսի հասարակութիւնը տեսաւ Բիլի և Տարսկիի «Ռազմի ընկերներ» (Боевые товарищи) պիէսը, որի նիւթը վերցված է ռուս-ճապօնական պատերազմին մասնակցող զինուորականների կեանքից։ Պիէսը գտաւ լաւ ընդունելութիւն և կրկնվեց մի քանի անգամ, թէև իր մէջ չէ պարունակում դրամայի տարրեր՝ իրանց բնական ու յաջորդական զարգացումով ու վախճանով։ Միայն նիւթի կառուցուածքը, որ կիրառվում է սիրոյ վրա, հետաքրքրական է դարձնում պիէսը։

Սեպտ. 27-ին յիշեալ պիէսը ներկայացրեց Զուբալովի Ժողովրդական Տան ռուս թատերասէրների խումբը թատրոնը ծայրից ծայր լցրած բազմութեան ներկայութեամբ։ Հէնց սկզբից նկատվեց հմուտ ռեժիսեօրի ազդեցութիւնը դերակատարների վրա։ Երեք գլխաւոր դերերը այդ օրը բաժանել էին իրար մէջ Կօրեակօվ, Իրանսկի և տ. Եանկօվսկայա, և պէտք է ասել, որ երեքն էլ բարեխղճօրէն դուրս եկան իրանց կացութիւնից։ Ապա դարձեալ համաչափ խաղով երևացին տ. Կօրեակօվա, Բարմատով, [illegible], Իւբիէվսկի և այլն։

Հասարակութիւնը բոլոր դերակատարներին էլ վարձատրեց երկար ծափահարութեամբ։

«Ռազմի ընկերները» կը կրկնվի Ժողովրդական Տան մէջ կրկին հոկտ. 2-ին։ Ե.

## ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թիֆլիսի Հայոց Դրամատիկական Ընկերութեան ներկայացումները սկսում են երկուշաբթի, հոկտեմբերի 8-ից Արտիստական Ընկ. թատրոնում։ Խումբը արդէն կազմված է և սեպտեմբերի 8-ից սկսված են արդէն մի քանի պիէսների փորձեր։ Խմբի կազմն է. տիկիններ՝ Մայսուրեան, Արմէնեան, Արուսեակ, Զաբէլ, Գուլազեան, Յասմիկ, Յովհաննիսեան, պ. պ. Աբէլեան, Ալիխանեան, Արմէնեան, Յարութիւնեան, Վրոյր, Մամիկոնեան, Բերոյեան, Լաքա, Ղազարեան, Տէր-Առաքելեան, Փիրումեան և Սարգսեան։ Ռէպերտուարը կազմված է աւելի շատ ինքնուրոյն պիէսներից, իսկ թարգմանականներից աչքի ընկնող պիէսներն են՝ «Էդիպ-արքայ», «Իոհան Ահեղի մահը», «Բօրիս-Գօդունօվ», «Խելագարը» և այլն։ Սէզօնը բացվում է Գ. Սունդուկեանի «Կտակ» նոր պիէսով։ Բացի երկուշաբթի օրերից խումբը երեքշաբթի օրերով խաղալու է Թիֆլիսի Ժողովարանում, ամիսը մի քանի անգամ Ժողովրդական Տանը և գուցէ ամիսը երկու անգամ Հաւլաբարում։ Ռեժիսեօր է նշանակված Արմէնեանը։

◆ Ժողովրդական Տան ռուս երաժշտասէրների խումբը այս տարի իր ներկայացումների սկիզբը որոշել է հոկտեմբերի 1-ին։ Որոշված է տալ 4 երաժշտական կտոր Հայրենական պատերազմի յօբելեանի առթիւ։

## ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Փորձ» երկամսեայ հանդէս, գրական, գեղարուեստական և գիտական. № 1 յուլիս-օգոստոս, 1912 թ. Պարիզ։

Պարբերական հրատարակութիւններ և զանազան տեսակի հանդէսներ երբէք մեզանում պակաս չեն եղել, բայց երբէք էլ երկար չեն ապրել. դրանց մեծ մասը հրապարակ է իջել մեծ-մեծ գործեր կատարելու առաջադրութիւնով. բայց հազիւ լոյս են տեսել նրա №№ 1, 2, 3 կամ 4-ը՝ և ահա նոր հրատարակութիւնները սկսել են կաղալ և դադարել՝ ցոյց տալով թէ գաղափարի, թէ «որոշ ամբողջական աշխարհահայեացքի» և թէ գործելու համար անհրաժեշտ եղող հոգի պակասութիւն։

Դա իր խոշոր պատճառն ունի. մեզանում հրատարակվում են յաճախ այնպիսի բաներ, որոնց կարիքը դեռ խիստ հեռաւոր կերպով է զգացվում, և ընդհակառակը անտես են առնվում այնպիսի հրատարակութիւնները, որոնք հրամայական պահանջ են դարձել. որոշ, կարճատև ժամանակի թռուցիկ, մակերեւոյթային ցանկութիւններն ու պահանջները երբէք մըշտական և օգտակար հրատարակութիւնների պատճառ չեն կարող լինել. ուրիշ խօսքով՝ պիտի ըմբռնել ժամանակի պահանջներն և ըստ այնմ դուրս գալ ասպարէզ։

Այս տեսակէտից, մեր կարծիքով՝ «Փորձը» մի կարևոր պակաս լրացնում է, չը նայած որ առաջին համարը աջող կազմված չէ. նրա առաջադրութիւնները խիստ այժմէական են—դպրոց, կրթութիւն և գիտութիւն։ «Մուրճից» յետոյ մի այդպիսի ամսագրի կարիքը մեզ համար մշտապէս զգալի է եղել. միայն զարմանում ենք, որ նրա խմբագիրն ու հրատարակիչները մեր կեանքից կտրված լինելու մասին բոլորովին չեն մտածել. մեզ յայտնի է, որ «Հիւսիսափայլն» էլ էր կտրված կեանքից, և դա անպայման նրա յարատեւութեան համար նշանակութիւն ունեցաւ. դրա փոխարէն «Մշակը», որ անմիջապէս էր կապված կեանքի հետ, չը նայած վատ պայմաններին, արդէն իր առաջին քառասնամեակը լրացրեց։

«Փորձի» առաջին համարում աչքի են ընկնում «Գրականութիւն և կեանք», «Քաօսի վերլուծութիւնը» և «Պարսկաստանը XIX դարում» յօդուածները. դրանց հեղինակները երեւում է որ որոշ ուղղութիւն ունեն և որոշ մեթօդ են գործ դնում հասարակական երևոյթները վերլուծելու համար. մնացածները մի բան չեն և առհասարակ երկամսեայ հանդէսին վայել լըջութիւնը չունեն։

Խմբագրութիւնն իր մասին շատ համեստ կարծիք ունի, և որ գլխաւորն է՝ առիթ է տալիս սկսնակ գրողներին երևան գալու։

«Փորձը», հակառակ սովորական նոր հրատարակութիւններին, ուզում է նեղ գռնով անցնել՝ լայնով դուրս գալու համար։

Հանդէսն իր պակասութիւններով հանդերձ գնահատելի է և խրախուսանքի արժանի։ Misantrop

## ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) «Հայկական նոր մատենագիտութիւն և հանրագիտարան հայ կեանքի», հ. Արսէն Ղազարոս Ղազիկեանի, երկրորդ պրակ (Հ—Մ), Վենետիկ, 1912 թ., էջ 1601—2080. գինն է 7 ֆր. 50 ս.։ 2) «Լիլի», Ա. Ջանեանի, Բագու, 1912 թ., էջ 32, գ. 20 կ.։ 3) «Նախկին ուսանողը», Ռէն..-ի, Թիֆլիս, 1912 թ., էջ 16, գ. 5 կ.։ 4) «Դայեակը», Կ. Մ. Ստանիւկովիչի, համառօտ. թարգմ. Սիմակ, Թիֆլիս, 1912 թ., էջ 64, ձրի յաւելուած «Հասկեր» ամսագրի։ 5) «Teodor Dostojewskij als Ethiker», Inaugural—Dissertation von Mikirtitsch Wanezian, Leipzig, 1912 թ., էջ 68։ 6) "Значеніе плодосмѣна и сѣвооборота„, В. Г. Гомилевскій, 1912 թ., էջ 32, безплатное приложеніе къ журналу „Земледѣлецъ". 7) «Աշխարհաբարի շարահիւսութիւն», Մ. Աբեղեանի, Վաղարշապատ, 1912 թ., էջ 364, գ. 1 ր. 50 կ.։ 8) «Դասագիրք բնական պատմութեան», Նիկ. Սարգսեանի, Թիֆլիս, 1912 թիւ, էջ 168, գինն է 50 կօպէկ։ 9) «Դասագիրք բնական պատմութեան», Ա. տարի, Ց. Տ. Մարտիրոսեանի և Ռ. Օհանջանեանի. Երևան, 1912 թ., էջ 111, գ. 30 կ.։ 10) «Դասագիրք բնական պատմութեան», Բ. տարի, Ց. Տ. Մարտիրոսեանի և Ռ. Օհանջանեանի, Երևան, 1912 թ., էջ 211, 50 կ.։ 11) «Մեթօդական գործնական ցուցմունքներ», Ց. Տէր-Միրաքեանի, Թիֆլիս, 1912 թ., էջ 114, գ. 20 կ.։ 12) «Рѣшеніе ариѳметическихъ задачъ и численныхъ примѣровъ сборника» В. А. Евтушевскаго, I часть, П. Г. Бастіанова, Тифлисъ, 1912 г. стр. 74 ц. 50 к. 13) «Երիտասարդ» գրական-պատկերազարդ ալմանախ, գիրք Բ., Ալէքսանդրօպօլ, 1912 թ., էջ 32, գ. 10 կօպ.։ 14) «Систематическій каталогъ птицъ кавказскаго края», К. А. Сатунина, Тифлисъ, 1912 г. стр. 195, ц. 40 к. 15) «Հասկեր» շաբաթաթերթ, Ա. տարի, № 29, Կահիրէ, 1912 թ., 5 օգ., գ. 1 ղր.։ 16) «Տաճար» կրօնակ. ազգ. գրակ. շաբաթաթերթ, խմբ. Զ. քհն. Կէգիւրեան, Գ. տարի, 1912 թ., № 32, 18 օգ., Կ. Պոլիս, գ. 1 ղր.։ 17) «Կոչնակ» շաբաթաթերթի №№ 35, 36, 37 և 38, Նիւ-Եօրկ, 1912 թ.։ 18) «Աւետաբեր» շաբաթաթերթի №№ 35, 36 և 37, 1912 թ., Կ. Պոլիս։ 19) «Природа и Люди», иллюстр. журн.; №№ 42, 43, 44, 45 и 46, 1912 г., С.-Петербургъ. 20) «Մարմնամարզ» պատկ. կիսամսեայ հանդէսի № 16, Բ. տարի, 1912 թ., Կ. Պոլիս։ 21) «Տարազ» պատկ. հանդէսի № 8—9, 1912 թ., Թիֆլիս։ 22) «Արարատ» ամսաթերթի № 7—8, 1912 թ., Վաղարշապատ։ 23) «Բազմավէպ» ամսագրի № 5—6, 1912 թ., Վենետիկ։ 24) «Հասկեր» մանկ. ամսաթերթի № 7—8, 1912 թ., յուլիս-օգոստոս, Թիֆլիս։ 25) «Վերածնունդ» ամսաթերթի № 4, Ա. տարի, Կ. Պոլիս, 1912 թ.։ 26) «Земледѣлецъ» ежемѣсяч. журн. по сельскому хозяйству; № 10, С.-Петербургъ 1912 г. 27) «Հաշիւ Արմաւիրի հայոց եկեղեցական քառաձայն խմբի» 1900—1910 թ., Ախալցխա, 1912 թ.։ 28) «Уставъ Тифлисскаго общества квартиронанимателей и владѣльцевъ дешевыхъ жилищъ 1912 г; Тифлисъ.

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 28 սեպտեմբերի

«Հորիզոնի» № 212-ում բժ. Ար. Զարգարեան, իբրև նախագահ 400-ամեայ հայ տպագրութեան յօբելեանի Թիֆլիսի յանձնաժողովի, այդ յանձնաժողովի կողմից մի բացատրութիւն է զետեղել, որ բավական թվով թիւրիմացութիւններ է պարունակում։ Ես պարտք եմ համարում պարզել երկու թիւրիմացութիւն, որոնք վերաբերում են յատկապէս Յովնանեան դպրոցին։

ա) Այդ բացատրութեան մէջ յայտարարված է, թէ «հասարակական ընկերութիւնների, լրագիրների, դպրոցական հաստատութիւնների ներկայացուցիչների երկու ժողովներին էլ վերոյիշեալ հաստատութիւնների («սրանց թվում նշանակված է և Յովնանեան դպրոցը) «պատգամաւորները ներկայ են եղել, մասնակցել են վիճաբանութիւններին և քվէարկութիւններին...»։

Իրողութիւնը սակայն այս է, որ Յովնանեան դպրոցի երկու պատգամաւորներից հոգաբարձու Մ. Մելիքեանը ներկայ չէ եղել ոչ առաջին և ոչ երկրորդ ժողովին. իսկ ես ներկայ եմ եղել միայն առաջին ժողովին, և երբ չընդունվեց իմ առաջարկը—ընտրել մի մասնաժողով՝ հարցը գիտական տեսակէտից քննելու համար—չընդունվեց և ինձ մինչև չը տրվեց հարցը ըստ էութեան լուսաբանել՝ ես դադարեցի այլևս ժողովի գործերին մասնակցելուց։ Իսկ երկրորդ ժողովին, երբ կատարվել է յանձնաժողովի ընտրութիւնը, ես այլ ևս չը գնացի։ Ապա ուրեմն Յովնանեան դպրոցը, յանձին իր երկու ներկայացուցիչների, չէ մասնակցել երկու ժողովներին էլ, և ոչ մի մասնակցութիւն չէ ունեցել յանձնաժողովի ընտրութեան քվէարկութեանը, որ տեղի է ունեցել երկրորդ ժողովում։

բ) Գրված է դարձեալ, թէ «Յովնանեան դպրոցի կողմից դեռ մինչև այսօր էլ ոչ մի յայտարարութիւն չէ եղել, թէ իրանք իրավական չեն համարում մեր յանձնաժողովի գոյութիւնը»։

Այսպիսի յայտարարութիւն տալը ըստ իս աւելորդ է միանգամայն։ Յանձնաժողովի գոյութիւնը իրավական է միայն նրանց համար, որոնք նրան ընտրել են. իսկ որոնք նրա ընտրութեանը չեն մասնակցել, բնական է որ նրա գոյութիւնը չեն կարող ճանաչել իբրև իրանց համար պարտաւոր իրավական մարմին։ Ինքը յանձնաժողովը պարտաւոր էր ուշադրութեամբ ստուգել իրան ընտրողների ցուցակը և հանել եզրակացութիւն, թէ ում անունից իրավունք ունի ինքը խօսել և գործել և ում անունից ոչ։

Այս հիման վրա էլ ամսիս 27-ին Յովնանեան դպրոցի մանկավարժ. խորհուրդը, երբ նրան զեկուցեցի յանձնաժողովի հրաւէրը այս երեկոյ կայանալիք նիստին մասնակցելու մասին, որոշեց ներկայացուցիչ չուղարկել, ի նկատի ունենալով որ յանձնաժողովի ընտրութեանն ինքը չէ մասնակցել. [illegible] ոչ իրավունք և ոչ պար[illegible] [illegible] նրա գործունէութեան զեկուցումը լսելու և խառնվելու միւս հարցերի քննութեան։ Բացի սրանից՝ մանկ. խորհուրդը նկատեց, թէ քանի որ դպրոցը, ի դէմս հոգաբարձական և մանկավարժական խորհուրդների, որոշել է նոյեմբերի 13-ին յոբելեանական տօնը կատարել՝ ուստի և ավելորդ ու հակասական էլ կը լինէր—նոյնիսկ եթէ առաջին պատճառը չը լինէր—մասնակցել մի ժողովի, որի մէջ քննութեան է դրված յոբելեանը յետաձգելու առաջարկը։ Ստ. Մալխասեանց

—

Թիֆլիս, 26 սեպտ.

Էջմիածնի վերանորոգութեան համար կազմված մասնաժողովը Թիֆլիսում՝ արդէն վերջնականապէս մշակեց ծրագիրը, թէ ինչ ձեւով-եղանակով պէտք է կատարվի տաճարի վերանորոգութեան գործը։ Այդ ծրագիրը հաւանութիւն է գտել Էջմիածնի յանձնաժողովի կողմից և հաստատվել։

Մասնաժողովը ընտրեց իր անդամներից երկու ճարտարապետի՝ պ. պ. Ն. Մաղաթեանին և Ռ. Մարտիրոսեանին, որոնք պէտք է հսկեն գործին՝ համաձայն վերոյիշեալ ծրագրի։

Այժմս ձեռք է բերվում բոլոր անհրաժեշտ նիւթերը, և շուտով կը ձեռնարկվի վերանորոգութեան գործին։

Թիֆլիսի մասնաժողովի նախագահ՝
Գ. Բաշինջաղեան

—

Թիֆլիս, 24 սեպտեմբերի

Ներսիսեան դպրոցի գանձապահի գումարներ վատնելու շուրջը լոյս տեսած յօդուածներում և լուրերում գանձապահի անունը տուած չը լինելու պատճառով՝ շատերը խառնել են ինձ հետ։ Եղած թիւրիմացութիւնը վերացրած լինելու համար պէտք է յայտնեմ, որ Ներսիսեան դպրոցի փողեր վատնող գանձապահը պօստ-հեռագրատան նախկին պաշտօնեայ Սողոմոն Ալիխանեանն է, որի հետ ես ոչ մի կապ չունեմ։

Շամք. դպր. աւ.-ուսուցիչ՝
Յակ. Ալիխանեան

—

Թիֆլիս, 27 սեպտեմբերի

Յայտնում եմ Թիֆլիսի հայոց միջնակարգ և ծխական դպրոցների վարչութիւններին՝ ով ցանկանում է այս կամ այն դպրոցի գրադարանի համար ստանալ նուէր իմ երկասիրութիւններից, պէտք է դիմէ ինձ հետեւեալ հասցէով՝ Гудовича ул. д. № 6.

Լեւոն Մանուէլեան

## ՀԵՐՔՈՒՄ

Թիֆլիսում մի քանի գրագէտներից և հինգ այնքան էլ աւելի կողմնակի՝ գրականութեան ու մամուլի հետ առնչութիւն չունեցող մարդկանցից կազմված 400-ամեայ հայ տպագրութեան յոբելեանի յանձնաժողովի նախագահը «Հօրիզոնի» երէկվայ № 212-ում այդ յանձնաժողովի կողմից պաշտօնապէս յայտնում է ի միջի այլոց և հետեւեալը.

«Իսկ ինչ վերաբերում է «Աղբիւր-Տարազի» խմբագրութեան և Յովնանեան դպրոցին, նրանց կողմից դեռ մինչև այսօր էլ ոչ մի յայտարարութիւն չէ եղել, թէ իրանք իրաւական չեն համարում մեր յանձնաժողովի գոյութիւնը»։

Ի՞նչպէս թէ մինչև օրս էլ ոչ մի յայտարարութիւն չէ եղել, թէ «իրանք իրաւական չեն համարում մեր յանձնաժողովի գոյութիւնը»։

Մի՞թէ «Աղբիւր-Տարազի» խմբագրութիւնը պարտաւոր էր գրաւոր յայտնել այդ յանձնաժողովին իր անհամաձայնութիւնը։

Մի՞թէ պարզ չէր այդ յանձնաժողովի համար, թէ «Աղբիւր-Տարազի» խմբագրութիւնը միայն մի անգամ ուղարկելով իր ներկայացուցիչներին այդ ժողովին և տեսնելով կողմնակի ժողովականների պարագլուխների անփառական և կուսակցական միտումները, հետեւեալ ընդհանուր ժողովներին չուղարկեց ներկայացուցիչներ։

Եւ մի՞թէ վերջապէս «400-ամեայ» հայ տպագրութեան յոբելեան կատարող յանձնաժողովը դեռ անցեալ յուլիսի 30-ին «Մշակի» № 141-ում չէ կարդացել հետեւեալը.

«Մեզ հաղորդում են, որ Տ. Նազարեան յանձնարարել է Յովհ. Յովհաննիսեանին հաղորդել Վեհափառ Կաթողիկոսի հովանու և պատւոր նախագահութեամբ Էջմիածնում կազմված հայ տառերի գիւտի 1500-ամեայ և տպագրութեան 400-ամեայ յոբելեանական կենտրոնական յանձնաժողովին, որ «Աղբիւր-Տարազի» խմբագրութիւնը պատրաստվում է նոյեմբերի 13-ի տօնախմբութեանը մասնակցել և համազգային այդ մեծ յոբելեանի տօնախմբութիւնը Վեհափառ Կաթողիկոսի հովանու և պատւոր նախագահութեամբ կազմվածն է ընդունում օրինական և հեղինակաւոր։ Հէնց այդպէս էլ արդէն զեկուցել է Տ. Նազարեանը միջազգային մամուլի դաշնակցութիւնների կենտրոնական կօմիտէին, որի փոխնախագահ Շվայցարից ստացել է նա արդէն մի գրութիւն յունիսի 5-ից, ուր ի միջի այլոց ասված է. «Անցեալ մայիսի 26-ից ձեր նամակը անսահման ուրախութիւն պատճառեց մեզ և կարդացի ես մեծ հետաքրքրութեամբ։ Չափազանց հետաքրքրում է ինձ հայ տառերի գիւտի 1500-ամեայ և տպագրութեան 400-ամեայ յոբելեանը։ Խորապէս համոզված եմ, որ այդ տօնախմբութիւնները մեծ հետաքրքրութիւն կը յարուցանեն և մեզ մօտ, և ես ձեզ անսահման շնորհակալ կը լինեմ, եթէ դուք հաղորդէիք ինձ մանրամասն տեղեկութիւններ այդ յոբելեանի շուրջ, որպէսզի մենք էլ հրապարակէինք»։ Տ. Նազարեան արդէն յոբելեանական մասնաժողովի անդամ Գարեգին վ. Յովսէփեանին խնդրել է տալ մանրամասն տեղեկութիւններ, իսկ Իս. Յարութիւնեանին էլ խնդրել, որ քաղուածքներ տայ իր «Գիր» աշխատութիւնից, որի օգտակար և ճիշդ լինելը յայտարարեց և Էջմիածնի յոբել. մասնաժողովի նախագահ Գալուստ Տէր-Մկրտչեանը»։

Բացի «Մշակում» տպվածից, նոյն տեղեկութիւնը տպագրված են և «Տարազում», և ռուսական թերթերում։

Գէթ այսօր, քանի ուշ չէ, գիտակցէր Թիֆլիսի այդ յանձնաժողովը իր ոչ-վայելուչ և շատ անտակտ վերաբերմունքն ու սթափվելով՝ միաձայն միանար Ամենայն Հայոց Հայրապետի հովանու տակ 1600-ամեայ Մայր Աթոռում հեղինակաւոր գրագէտներից և ուսուցչապետներից կազմված յանձնաժողովին։ Տ. Նազարեան

## ԿՈՉ

Գանձակի ս. Յովհաննէս եկեղեցու ծխական դպրոցը բոլորեց իր գոյութեան 50 տարին։ Վարչութիւնս որոշեց 50-ամեակը տօնել այս տարվայ հոկտեմբերի 21-ին։

Ի Տէր հանգուցեալ Մատթէոս Բ. երջանկայիշատակ կաթողիկոսը 1862 թւի յունիսի 29-ի սրբատառ կոնդակով օրհնում է Գանձակի հայ ազգաբնակութեան ազգասիրական բարեջանութիւնը՝ ս. Յովհաննէս եկեղեցու ծխական դպրոցը բաց անելու համար, և նոյն 1862 թւի հոկտեմբեր ամսին բացվում է այդ դպրոցը։

Մեր ազգային կեանքում, ուր մանաւանդ ժողովրդական լուսաւորութեան գործը այնքան դանդաղ է գնում և մշտապէս կապված է խոչընդոտների հետ, դպրոցիս 50-ամեայ անընդհատ գոյութիւնը մի բացառիկ և գնահատելի երեւոյթ է։

Յիսուն երկար ու ձիգ տարիներ ս. Յովհաննէսի դպրոցը կռւելով ձախորդ հանգամանքների դէմ հանդիսացել է լուսաւոր փարոս Գանձակի հայ խաւար կեանքում։

Ս. Յովհաննէսի դպրոցը ապագայում էլ դեռ շատ մեծ դեր ունի կատարելու մեր հասարակական կեանքում։

Վարչութիւնս, աչքի առաջ ունենալով իր դպրոցի կատարած գեղեցիկ գործը անցեալում, ցանկանում է 50-ամեայ անցեալը յաւերժացրած լինել մի այլ գեղեցիկ գործով։ Այս որոշմամբ հոգաբարձութիւնս բաց արեց նոյն դպրոցում վեցերորդ բաժանմունք, որը մինչև այժմ գոյութիւն չունէր, աւելացնելով այսպիսով առանց այն էլ դպրոցի բիւջէի բացը աւելի մեծ գումարով։ Բացի այս՝ հոգաբարձութիւնս բարոյական պարտք է զգում կոչ անել ընդհանրապէս հայ հասարակութեանը և մանաւանդ Գանձակի հայ հասարակութեանը ու նրա շրջանաւարտ սաներին, հրաւիրելով բոլորի ուշադրութիւնը այն մեծ պակասութեան վրա, որը այսօր այնքան զգալի է։

Դպրոցը չունի սեփական շէնք. նա այսօր տեղաւորված է վարձու տան մէջ, որը ոչ պատշաճ բան է այս՝ 50 տարվայ անցեալ ունեցող լուսատու հաստատութեան համար։

Հոգաբարձութիւնս յայտարարելով դպրոցի 50-ամեակի այս ուրախալի երեւոյթի մասին ի գիտութիւն ընդհանրութեան՝ դիմում է և խնդրում Գանձակի հայ հասարակութեանը, նրա անդամներին և թէ ազգասէր ու բարերար հարուստներին ու հաստատութիւններին մասնակցել հոկտեմբերի 21-ին կատարվելիք 50-ամեայ յոբելեանական տօնին և միևնոյն ժամանակ չը մնալ իրանց լուման յօգուտ դպրոցական շինութեան։ Նուէրներ կարելի է ուղարկել դպրոցիս հոգաբարձութեան հասցէով։

Գանձակի ս. Յովհ. եկեղեցու
հոգաբարձութեան
Նախագահ՝ Մ. Վ. Մելքոնեան
Աւ.-ուսուցիչ Կ. Ղլպուղեան

## ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Չերնօգորիայի և Բօլգարիայի սահմաններում կատաղի կռիւներ են Թիւրքաց և դաշնակից պետութիւնների զօրքերի միջև։ Կան անհամար վիրաւորներ և սպանվածներ։

◆ Բէրանի մօտ չէրնօգօրցիները կորցրին 500 մարդ, թէև թիւրքերը յետ քաշվեցին իրանց դիրքից։

◆ Թիւրք-բօլգարական սահմանագլխում կանգնել են դէմ առ դէմ երկու մեծ զօրաբանակ. Թիւրք զինւորների թիւն է 100 հազար, իսկ դաշնակից բօլգարական և սերբիական զօրքերի թիւը 150 հազար. Սպասվում է սոսկալի ճակատամարտ։ Քրիստոնեայ զօրքերը գտնվում են Ֆէրդինանդ Թագաւորի հրամանատարութեան ներքոյ։

◆ Աւստրո-Ունգարիան պատերազմական գաղտնի պատրաստութիւններ է տեսնում Բոսնիայում և Հերցեգովինայում. Աւստրիայի նպատակն է Սերբիայի գործողութիւնները խափանել։

◆ Բուլոնի մօտերը ապստամբվեցին թիւրքական երկու բատալիօն, պահանջելով վերադարձնել իրանց հայրենիք։

◆ Թիւրքերը Սերբիայի համար ուղարկվող ռազմամթերքները գրաւելով գործադրում են այդ իրանց մէջ պատերազմի դաշտում։

◆ Մակեդոնիայում սկսվեց ապստամբութիւն։ Զէնք են վերցրել աւելի քան 30,000 հոգի։

◆ Ալբանական ցեղերի պարագլուխները պահանջում են սուլթանից վերստին իշխանութեան կոչել Քեամիլ-փաշային և տապալել ներկայ կաբինէտը։ Այլապէս պարագլուխները սպառնում են ապստամբվել։

◆ Դիակովոյի և Իփէկի քրիստոնեայ ալբանները միանում են բալկանեան զօրքերին։

◆ Վիէննայից տեղեկացում են, որ բօլգարները ոչնչացրել են թիւրքական 2 բատալիօն։

◆ Բէլգրադի մօտ սպանվեցին 6 թիւրք, որոնք զգեստները փոխած աշխատում էին պայթեցնել վառօդի պահեստը։

◆ Վերջին տեղեկութիւնների համաձայն Աւստրիան սառը վերաբերվեց Պուանկարէի առաջարկութեանը անգլօ-ռուսական համաձայնութեան մասին, վախենալով Անգլիայի և Ռուսաստանի ինտրիգներից։

◆ Հերքվում է աւստրիական և թիւրքական աղբիւրներից բղխող այն լուրերը, իբր դաշնակիցների միջև երկպառակութիւն է ընկել։ Չորս դաշնակիցներն էլ գործում են համերաշխ ու միաբան։

◆ Բալկանեան պատերազմի ազդեցութեան տակ Օդեսսայում բօրսայի գների անկման պատճառով կորցրեց իր ամբողջ կարողութիւնը տեղական յայտնի հարուստներից մէկը, որ այժմ խելագար է և իրան անուանում է բալկանեան զօրքի գլխաւոր հրամանատար։ Նոյն պատճառից Պետերբուրգում բօրսայի մէջ յանկարծամահ եղաւ յայտնի մակլէր ծերունի Ա. Բեդէրը։

◆ Ժընէվում կազմակերպված «բալկանեան լիգան» կոչվ օգնութիւն է խնդրում եւրոպական հասարակութիւնից։

◆ Ռուսաց մինիստրների խորհրդի նախագահ Կոկովցեվի Կովկաս գալը քաղաքական նպատակ չունի։ Պրեմիէրը ուզում է հանգստանալ մօտիկ անցեալի լարված աշխատանքից և թողնել ներքին գործերի մինիստր Մակարովին միայն կառավարել Պետական Դումայի ընտրութիւնները։

◆ «У. Р.»-ին հաղորդում են, որ Պետերբուրգի արդիւնաբերողները Պետական Խորհրդի անդամի պաշտօնի համար որոշել են տապալել միլիօնատէր Պաւլ Օս. Ղուկասովի թեկնածութիւնը։

◆ Թէհրանից «Н. В.»-ին հեռագրում են, որ Սազօնովը և Գրէյը որոշել են էքս-շահին նորից պարսկական գահը չը վերադարձնել, ինչպէս և մերժել Նասըր-ուլ-Մուլքին պետական խնամակալի պաշտօնը տալու առաջարկութիւնը։

◆ «Рѣчь»-ը գրում է, որ ընդհակառակն էքս-շահը վերադառնալու է իր գահին։ Նրա մօտ լինելու են 4 ռուս և 4 անգլիացի խորհրդականներ։

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

27 սեպտեմբերի

ՍՈՒՄՍԿԻ ՊՈՍԱԴ։ Սպիտակ ծովում ցիկլօնը շատ նաւեր խորտակեց։

ԿՕՍՏՐՈՄԱ։ Եկաւ սինօդի օբէր-պրօկուրօրը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Վերադարձաւ արտաքին գործերի մինիստրը։

Գրաւվեց «Лучь»-ի 10-րդ համարը։

ՏԱՇԿԷՆՏ։ Եկաւ ճան. հաղորդակցութեան մինիստրը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Սենատն անհետեւանք թողեց «Звѣзда»-ի խմբագիր Բարաշկովի վճռաբեկ գանգատը, որ 129-րդ յօդուածով դատապարտված է 3 տարով բանտարկութեան։

Ժող. լուս. մինիստրութիւնը Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Վօյէյկովին ուղարկեց ծանօթանալու համար սատղաբաշխական դասաւանդութեան հետ Գերմանիայում, Աւստրիայում և Ֆրանսիայում։

ՄՈՍԿՎԱ։ «Утро Россіи» և «Трудовая Копейка» լրագիրները ենթարկվեցին 500 րուբլի տուգանքի։

ԲԵՐԼԻՆ։ Ազօրեան կղզիներից Կօլէնձգէն դիմող գերմանական մի առեւտրական շոգենաւի վրա ապստամբվեցին 3 օֆիցեր և 18 նաւաստի։ Ապստամբներին տարան Թունիսի բերդը։

ԱՐԽԱՆԳԷԼՍԿ։ Ծովային փոթորկի ժամանակ խեղդվեցին 5 մարդ։

ՋԻՖՈՒ։ Հանդէսով կատարվում է Ունկանի գրաւման տարեկիցը յեղափոխականների ձեռքով։

ՀՌՈՄ։ Պապը հանդիսաւոր ունկնդրութեան ընդունեց ռուսաց դեսպան Նէլիդովին։

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐՏԻՆԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

## ՏԵՂԵԿԱՏՈՒ

### ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառնային երթեւեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

—

### ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱՔՈՒ.—Արագ գնացքը № 2—10 ժ. 8 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 30 ր., Գանձակ 2 ժ. 58 ր., Եւլախ 4 ժ. 29 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 7 ր. երեկ., Բաքու 11 ժ. 13 ր. գիշ.։ **Պոստատար գնացքը** № 4—12 ժ. 10 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 3 ժ. 4 ր. գիշ., Գանձակ 6 ժ. 14 ր. առ., Եւլախ 8 ժ. 13 ր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 48 ր. ցեր., Բաքու 5 ժ. 20 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 6—2 ժ. 44 ր. ցեր., հասնում է Աղստաֆա 5 ժ. 34 ր., Գանձակ 8 ժ. 42 ր. երեկ., Եւլախ 10 ժ. 39 ր. գիշ., Հաջի-Կաբուլ 3 ժ. 21 ր. գիշ., Բաքու 7 ժ. 38 ր. առ.։ **Խառն գնացքը** № 106 (III կամ IV կարգի վագօններով, երբ կարեւորութիւն զգացվի)—4 ժ. 37 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 44 ր. առ., Գանձակ 1 ժ. 5 ր. ցեր., Եւլախ 4 ժ. 13 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 11 ժ. 45 ր. գիշ., Բաքու 5 ժ. 54 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄ.—**Արագ գնացքը** № 11—10 ժ. 44 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 40 ր. գիշ., Բաթում՝ 8 ժ. 58 ր. առ.։ **Պոստատար գնացքը** № 3—9 ժ. 41 ր. ցեր., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 59 ցեր., Բաթում 11 ժ. 36 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 5—6 ժ. 36 ր. եր., հասնում է Միխայլօվօ 10 ժ. 38 ր. գիշ., Բաթում 7 ժ. 26 ր. առ.։ **Խառն գնացքը** № 107 (III կամ IV կարգի վագօններով, երբ կարեւորութիւն զգացվի) 6 ժ. 18 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 32 ր. ցեր., Բաթում 4 ժ. 31 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պոստատար գնացքը** № $^{74}/_{75}$—12 ժ. 40 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 7 ժ. 54 ր. առ., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 24 ր. ցեր., Էջմիածին 4 ժամ 40 րօպ. ցեր., Ուլուխանլու 5 ժ. 7 ր. ցերեկվայ (առանց Երեւան մտնելու), Նախիջեւան 9 ժ. 50 ր. եր., Ջուլֆա 11 ժ. 21 ր. գիշ., **Մարդատար-ապրանքատար գնացքը** № $^{78}/_{79}$ (միայն II և III կարգի վագօններով)—7 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 2 ժ. 18 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 5 ժ. 56 ր. գիշ., Էջմիածին 11 ժ. ցեր., Ուլուխանլու 11 ժ. 26 ր., Երեւան 12 ժ. 19 ր. ցեր.։ **Մարդ.-ապրանքատար** № $^{108}/_{109}$—11 ժամ 28 րօպ. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 7 ժ. 28 ր. եր., Ալէքսանդրօպօլ 11 ժ. 27 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 40 ր. գիշ., Ուլուխանլու 6 ժ. 15 ր. առ., Երեւան 7 ժ. 23 ր. առաւօտեան։

ԲՈՐԺՈՄ.—**Մարդատար գնացքը** № $^{7}/_{8}$—7 ժ. 58 ր. առ., հասնում է Գօրի 10 ժ. 43 ր., Բօրժոմ 1 ժ. 39 ր. ցեր., **Մարդատար գնացքը** № $^{9}/_{10}$—3 ժ. 5 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 48 ր. ցեր., Բօրժոմ 8 ժ. 41 ր. երեկոյեան։

### ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱՔՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 1—9 ժ. 56 ր. եր., **Պոստատար գնացքը** № 3—8 ժ. 56 ր. առ.։ **Մարդատար գնացքը** № 5—5 ժ. 51 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 107—4 ժ. 56 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Արագ գնացքը** № 12—9 ժ. 18 ր. առ.։ **Պոստատար գնացքը** № 4—11 ժ. 15 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 6—1 ժ. 59 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 106—3 ժ. 40 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պոստ. գնացքը** № $^{72}/_{73}$—7 ժ. 26 ր. առ., **Մարդատար-ապրանքատար գնացքը** № $^{74}/_{75}$—8 ժ. 33 ր. եր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № $^{80}/_{81}$—12 ժ. 48 ր. ցեր.։

ԲՈՐԺՈՄԻՑ.—**Մարդատար գնացքը** № $^{7}/_{8}$—7 ժ. 8 ր. առ., **մարդատար գնացքը** № $^{9}/_{10}$—9 ժ. 8 ր. երեկոյեան։

Высочайше Утвержденное Русское Общество Пароходства и Торговли, учрежд. въ 1856 г.

**ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ.**

Ամառային երթեւեկութիւն

ՂՐԻՄ-ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳԻԾ

Մեկնում են Բաթումից

I **Պոստային-մարդատար շոգենաւեր.**
Երեքշաբթի ժամի 1-ին գիշերը, շրջանակի գծով
Հինգշաբթի » 1 » »
Շաբաթ » 12 » ուղղակի »
II **Մարդատար շոգենաւեր.**
Երկուշաբթի ժամի 2-ին ցերեկը, շրջանակի գծով
Շաբաթ » 2 » »
III **Մարդատար-ապրանքակիր շոգենաւեր.**
Երեքշաբթի կէս գիշերին, շրջանակի գծով.
Ուրբաթ » » »

Ժամերը Պետերբուրգի են։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՓՈՍՏԱՅԻՆ ԳԻԾ

Կանօնաւոր հաղորդակցութիւն դէպի Ալէքսանդրիայի [illegible], Մակեդոնիայի, Սերբիայի, Անատօլիայի, Պարսից-Ծոցի (Персидскій заливъ) գծերի բոլոր նաւահանգիստները։

ԲԱԼՏԻԱԿԱՆ ԳԻԾ

Կանօնաւոր հաղորդակցութիւն ուղղակի Պետերբուրգ-Ռիգա, Լիբավա և Ռէվել։

Տոմսակները կարելի է գնել Թիֆլիսի գրասենեակում Վելիամինովսկայա փողոց, № 18.

**Հեռախօս № 11.**

Ընդունվում են եւ ապահովացվում են ապրանքներ ձեռնտու պայմաններով։

Գործակալ՝ **Ս. Ի. Սուլխանեանց**

(շ.) 0—69

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

**ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ**

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)

**Ամեն օր, բացի կիրակի օրերից**

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

«606»-Ի ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական (սիֆիլիս) հ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—$9^{1}/_{2}$—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Ջ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վերաբուժութեան և միզասեռ. հ.։
Գ. Յ. ԳՈՒՐԳԷՆՕՎ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԱՄԲՐՈՒՄՕՎԱ-ՄԵԼԻՔԵԱՆ —12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
ԿԻՆ ԲԺԻՇԿ Մ. Լ. ՌԵՆԻԳԵՐ-ԱՐԵՃԵՎԱ—6—7 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Ջ. Ա. ԹԱՌՈՒՄԵԱՆ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. քննութիւն արեան, մէզի և այլն։

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ **Բ. Նաւասարդեան**

1. 0—91

**ԲԺԻՇԿ**

**Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ**

Մասնագէտ **սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն։**

Ընդունե- ( $12^{1}/_{2}$—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը ( 5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր ( Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.

Սօլօլակ, Բէբուտօվսկայա, № 33 (անկիւն Պասկէվիչի փողոցի)։ Տէլէֆօն № 1175.

(ա.օ ) 377. 100—15

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„Մշակի“ խմբագրատանը

վաճառվում են

ՀԵՏԵՒԵԱԼ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ.

1) Հասարակութեան նեցուկները, Հ. Իբսէնի, թարգ. Լ. Բաբայեանի 50 կ.
2) Նոր կեանքի շեմքում, դրամ. էտիւդ գաւառ. կեանքից, Ա. Ք.-ի 40 կ.
3) Նշանվածներ, պիէս 3 գործ., Ալ. Աբէլեանի . . . . . 60 կ.
4) Ուսանողներ, 3 գործ, Գ. Բաշինջաղեանի . . . . . . 50 կ.
5) Կայէնի ճանկերում, դրամա 5 գործ., Աւետիք Առաքելեանի (յօգուտ «Մշակի» ֆօնդի) . . 50 կ.

Նրանք, որոնք այս գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ վճարելով, կը ստանան 25% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին կը լինի միմիայն 15%։

Հասցէն՝ Ред. газ. „Мшакъ“, Тифлисъ.

(1) 10—3

ՀՐԱՒԷՐ

Վաղը, կիրակի, ամսիս 30-ին, առաւօտեան ժամը 10 ին, Ս. Կարապետ եկեղեցում լինելու է ծխականների առաջին ընդհանուր ժողով՝ ընտրելու նոր երեցփոխ։ Ուստի այս մասին յայտնելով նոյն եկեղեցու բոլոր չափահաս ծխականներին, խնդրում եմ որոշած օրը և ժամին ներկայ լինել ժողովին՝ ընտրութեանը մասնակցելու։

Գործակալ՝ Ղեւոնդ քահ. Մամիկոնեան

728. 1—1

Կրօնի դասագրքերը

**ՔԱՄԱԼԵԱՆ Ս. ԴՊՐԻ**

Ա. ՏԱՐԻ «Բարոյագիտական զրոյցներ և Յիսուսի կեանքից պատմուած.», 10 կ.
Բ. ՏԱՐԻ «Նահապետների կեանքից մինչև Յովսէփի մահը», 20 կ.
Գ. ՏԱՐԻ «Մովսէսից մինչև Եղիա», 35 կ.
Դ. ՏԱՐԻ «Մարգարէներ և հրէից ազգի վիճակը մինչև Հերովդէս», 160 էջ, 40 կ.

Դիմել Թիֆլիսի գրախանութներին։

(օ. մ.) 712. 5—4

Ներսիսեան Հայոց Հոգեւոր Դպրոցի Հոգաբարձութիւնը սրանով յայտնում է, որ 1913 թւի յունվար ամսին դպրոցում կը լինի աշակերտների ընդունելութիւնը I, II և V դասարաններում քննութեամբ։ Ցանկացողները պէտք է ներկայացնեն խնդրագրի հետ միասին ծննդեան և ծաղկի վկայականները դպրոցիս վերատեսչի անունով։ (Հ. Հ.) 720. 3—3

Ջեղած դեպք!!! Միայն 2 ր. 95 կ.

Ուղարկում ենք հետեւեալ 14 արժէքաւոր իրերը. 1) Տղամարդու գրպանի շքեղ և գլիմացուն ժամացոյց «Անկեր» (ոչ-ցիլինդր) անգլիական սև պողպատից, գլխից լարվող 36 ժամը մէկ անգամ, ընթացքը ձայնեղ՝ 15 քարով։ 2) Նորաձև շքեղ շղթայ, իսկ կանանց համար պարանոցի շղթայ։ 3) Բրելօկ կինեմատօգրաֆ հետաքրքր. նկար. կամ կողմնացոյց։ 4) Զամշէ քսակ ժամացոյցը փչանալուց պահպանելու համար։ 5) Գեղեցիկ մատանի ամերիկ. «Դուբլէ» ոսկուց պարիզեան ակնով։ 6) Թատրօնական բինօկլ. 4 ախրօմատիկ. ապակիով սովորական մեծութեան, որ մօտեցնում է շատ հեռու տարածութեան վրա։ 7) Ժամացոյցը գողերից պաշտպանող։ 8) Պարիզեան պլատօգրաֆ, որ կէտ առ կէտ ցոյց է տալիս ամենատեսակ տեսարաններ ինչպէս բնականում։ 9—14) Սրա համար 6 հատ շատ հետաքրքրական նկարներ։ Ամբողջ գարնիտուրի գինն է միայն **2 ր. 95 կ.**, 2 գարն. **5 ր. 50 կ.**, 4 գարն. **10 ր. 50 կ.**։ Վերոյիշեալ գարնիտուրը ամենալաւ յատկութեան և բարձր տեսակի ժամացոյցով և իրերով **3 ր. 95 կ.**, 2 գարն. **7 ր. 40 կ.**։ Գարնիտուր կանացի ժամացոյցով—**3 ր. 70 կ.**։ Նոյնպիսին 3 փական ունեցող ժամացոյցով 1 ր. թանգ։ Ճանապարհածախսը 2 հատին 40 կ., Սիբիր 75 կ.։ Ժամացոյցն ուղարկվում է ճշգված մինչև րօպէն և 8 տարվայ երաշխաւորութեամբ՝ վերադիր վճարով և առանց կանխավճարի։

Հասցէագրել՝ Т-во „ЗАРЯ“. ВАРШАВА. Отд. 67.

Խնդրում ենք հասցէն կարճ և ամուր կպցնել ծրարին կամ բացիկին։

(ս.8) (В. 44375) 2—2

**Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ**

Առեւտրական Գիտութիւնների Կուրսերում

Նոր մեթօդով սովորեցվում են

ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ և ԱՆԳԼԻԵՐԷՆ

ազատ կարդալ, գրել և խօսել կարճ ժամանակվայ ընթացքում տեսական և գործնական պարապմունքների միջոցով, հանրամատչելի վճարով։ Կազմակերպվում են հասակաւորներից երեկոյեան խմբեր։ Շտապողական Դասընթացքներ արտասահման գնալ ցանկացողների համար։ Մանրամասն տեղեկութիւնները և ընդունելութիւնները կուրսերի գրասենեակում—ամեն օր՝ ժամը 10—12-ը և 4—7-ը։ Միխայլօվսկի պր. № 24—4.

(ա.օ.) 643. 0—21

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный